The provisions of the legislation are given as of June 23, 2023. The conclusions are based on the results of an analysis of a voluminous case of materials data from statistical records, the practice of courts of general jurisdiction and arbitration courts, prosecutor's offices and other administrative and jurisdictional bodies related to the literary sources of this topic, and have fundamental charachter.

The study is intended for a wide range of readers, including practical and scientific employees of the prosecutor's office, as well as for anyone interested in ensuring the rule of law in the field of insolvency (bankruptcy).

Аннотация

Статья посвящена актуальной в современных условиях теме изучению состояния законности в сфере несостоятельности (банкротства) с 2020 года по настоящее время. Авторами дан развернутый анализ основных результатов обеспечения прокурорами законнос-ти в сфере несостоятельности (банкротства) посредством надзорных и иных полномочий, упоминается практика арбитражных судов по соответствующим делам, анализируются вопросы административного преследования и разграничения полномочий административно-юрисдикционных органов, исследуется правовая коллизия и ставится вопрос о совершенствовании законодательства.

Положения законодательства приведены по состоянию на 23 июня 2023 года. В обоснование выводов положены результаты анализа объемного кейса материалов сведений статистических учетов, практика судов общей юрисдикции и арбитражных судов, органов прокуратуры и иных административно юрисдикционных органов, связанных с этой темой литературных источников, в том числе фундаментального характера.

Работа предназначена для широкого круга читателей, в том числе практических и научных работников прокуратуры, а также для всех интересующихся вопросами обеспечения законности в сфере несостоятельности (банкротства).

Հիմնաբառեր՝ սնանկություն, դատախազություն, դատարան, արբիտրաժային դատավարություն, վարչական իրավախախտում, վարչական հետապնդում, օրինականություն, քաղաքացիների իրավունքներ, պետության շահեր, արբիտրաժային կառավարիչ

Keywords: bankruptcy, prosecutor's office, court, arbitration proceedings, administrative offense, administrative prosecution, legality, citizens' rights, state interests, arbitration manager.

Ключевые слова: банкротство, прокуратура, суд, арбитражное судопроизводство, административное правонарушение, административное преследование, законность, права граждан, интересы государства, арбитражный управляющий.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CRIMINAL PROCEDURE / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС

ԿԱՉԱԼՈՎԱ ՕՔՍԱՆԱ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի քրեական դատավարության իրավունքի Ն.Վ. Ռադուտնայայի անվան ամբիոնի պրոֆեսոր

KACHALOVA OKSANA
Doctor of Legal Sciences, Professor, Professor of the Department of Criminal Procedure Law named after. N.V. Radutnaya of the Russian State University of Justice

КАЧАЛОВА ОКСАНА
Доктор юридических наук, профессор, профессор кафедры уголовно-процессуального права им. Н.В. Радутной Российского государственного университета правосудия

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ALTERNATIVE PREVENTIVE MEASURES IN THE CRIMINAL PROCEDURE OF RUSSIA AND ARMENIA*

АЛЬТЕРНАТИВНЫЕ МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РОССИИ И АРМЕНИИ*

Ամփոփագիր

Կալանավորման բացառիկության պարադիգմը հանգեցրել է Ռուսաստանում և Հայաստանում այլընտրանքային խափանման միջոցների համակարգի զարգացմանը, որոնք գնալով առավել հաճախ են կիրառվում քրեական դատավարությունում: Ռուսաստանի և Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է խափանման միջոցների լայն շրջանակ, որոնք փաստացի ազատությունից չեն զրկում անձին, ով անմեղության կանխավարկածի ուժով դեռևս մեղավոր չի ճանաչվել հանցանքի կատարման մեջ, և կարող են կիրառվել մեղադրյալների նկատմամբ՝ նրանց պատշաճ վարքագիծն ապահովելու համար: Դրանց թվին են դասվում տնային կալանքը, արգելող բնույթի խափանման միջոցները (որոշակի գործողությունների արգելում և վարչական հսկողություն), գրավը, երաշխավորությունը, պաշտոնից հեռացնելու, տեղաշարժի ազատությունը սահմանափակելու (չհեռանալու և պատշաճ վարքագծի մասին ստորագրություն և ելքի արգելք) հետ կապված խափանման միջոցները, զինծառայողների համար զորամասի հրամանատարության հսկողությունը և անչափահասների համար դաստիարակչական հսկողությունը:

Ժամանակակից քրեական արդարադատության կարիքները պահանջում են այնպիսի մոտեցում, որի պարագայում համալիր կարող են կիրառվել մի քանի խափանման միջոցներ կամ տարբեր խափանման միջոցներով նախատեսված արգելքներ կամ սահմանափակումներ: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ճկուն օգտագործել այլընտրանքային խափանման միջոցների հնարավորությունները՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով կիրառելով ազատությունից զրկելու հետ չկապված արգելքների և սահմանափակումների հնարավոր ողջ զինանոցը:

Annotation

The paradigm of the exclusivity of detention has led to the development of a system of alternative preventive measures in Russia and Armenia, which are increasingly used in criminal proceedings. The legislation of Russia and Armenia provides for a wide range of preventive measures that do not actually deprive of freedom a person who has not yet been found guilty of a crime by virtue of the presumption of innocence and can be applied to the accused in order to ensure their proper behavior. These include house arrest, preventive measures of a restraining nature (prohibition of certain actions and administrative control), bail, preventive measures related to removal from office, preventive measures restricting freedom of movement (recognizance not to leave and proper behavior and travel ban), supervision of the command of the military unit for military personnel and educational supervision of minors.

The needs of modern criminal justice require an approach in which several preventive measures or prohibitions and restrictions provided for by various preventive measures can be applied in a complex manner. This approach makes it possible to use the possibilities of alternative preventive measures more flexibly, using the entire possible arsenal of prohibitions and restrictive means not related to deprivation of liberty in order to ensure the proper behavior of the accused.

Аннотация

Парадигма исключительности заключения под стражу привела к развитию в России и Армении системы альтернативных мер пресечения, которые все чаще стали применяться при производстве по уголовным делам. В законодательстве России и Армении предусмотрен широкий спектр мер пресечения, которые фактически не лишают свободы лицо, еще не признанное в силу презумпции невиновности виновным в совершении преступления, и могут быть применены к обвиняемым в целях обеспечения их надлежащего поведения. К ним относятся домашний арест, меры пресечения запретительного характера (запрет определенных действий и административный контроль), залог, поручительство, меры пресечения, связанные с отстранением от должности, меры пресечения, ограничивающие свободу передвижения (подписка о невыезде и надлежащем поведении и запрет на выезд), надзор командования воинской части для военнослужащих и воспитательный надзор за несовершеннолетними.

Потребности современного уголовного судопроизводства требуют подхода, при котором могут комплексно применяться несколько мер пресечения либо запреты и ограничения, предусмотренные различными мерами пресечения. Такой подход позволяет использовать возможности альтернативных мер пресечения более гибко, применяя весь возможный арсенал запретов и ограничительных средств, не связанных с лишением свободы в целях обеспечения надлежащего поведения обвиняемого.

Հիմնաբառեր՝ խափանման միջոցներ, ազատության իրավունք, կալանք, տնային կալանք, գրավ:

Key words: measures of restraint, the right to freedom, detention, house arrest, bail.

Ключевые слова: меры пресечения, право на свободу, заключение под стражу, домашний арест, залог.

ՄԱՐԿՈՎԻՉԵՎԱ ԵԼԵՆԱ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի քրեական դատավարության իրավունքի Ն.Վ. Ռադուտնայայի անվան ամբիոնի պրոֆեսոր

MARKOVICHEVA ELENA
Doctor of Legal Sciences, Associate Professor, Professor of the Department of Criminal Procedure Law named after N.V. Radutnaya of the Russian State University of Justice

МАРКОВИЧЕВА ЕЛЕНА
Доктор юридических наук, доцент, профессор кафедры уголовно-процессуального права имени Н.В. Радутной Российского государственного университета правосудия

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՀՈԳԵԲԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

PARTICIPATION OF A PSYCHOLOGIST IN CRIMINAL PROCEEDINGS INVOLVING MINORS IN THE RUSSIAN FEDERATION*

УЧАСТИЕ ПСИХОЛОГА В ПРОИЗВОДСТВЕ ПО УГОЛОВНОМУ ДЕЛУ С УЧАСТИЕМ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ*

Ամփոփագիր

Քրեական դատավարության շրջանակներում քննչական գործողություններ կարող են իրականացվել նաև անչափահասների մասնակցությամբ, որոնք տարիքով պայմանավորված ունեն հոգեբանական խոցելիության ավելի բարձր աստիճան: Քննչական իրավիճակը, որում ստացվում է անչափահասի ցուցմունքը, անբարենպաստ է երեխայի հոգեկանի համար և կրում է երկարաժամկետ հոգետրավմատիկ հետևանքների վտանգ:

Ժամանակակից ռուսաստանյան քրեական դատավարությունում նման ռիսկերը նվազեցնելու համար ավելի ակտիվանում է հոգեբանի դատավարական մասնակցությունն առանձին քննչական գործողությունների իրականացմանը: Բայց քանի որ այս մասնակիցը համեմատաբար վերջերս է հայտնվել ռուսաստանյան քրեական դատավարությունում, նրա ներգրավվածությունը անչափահասի հարցաքննությանը հղի է մի շարք դժվարություններով: Առկա խնդիրները կարելի է բաժանել ընթացակարգայինի և կազմակերպչականի: Դրանց լուծումը պահանջում է ոչ միայն գիտական հետազոտություններ և օրենսդրական փոփոխություններ, այլ նաև ուրիշ պետությունների դրական փորձի հաշվառում:

Annotation

Within the framework of criminal proceedings, investigative actions can be carried out with the participation of minors, who, due to their age, have a higher degree of psychological vulnerability. The investigative situation in which the testimony of a minor is obtained is unfavorable for the child's psyche and carries the risk of long-term psychotraumatic consequences.

To reduce such risks in modern Russian criminal proceedings, the procedural participation of a psychologist in the production of individual investigative actions becomes more active. But, since this participant appeared in Russian criminal proceedings relatively recently, his involvement in the interrogation of a minor is fraught with a number of difficulties. The existing problems can be subdivided into procedural and organizational ones. Their resolution requires not only scientific research and legislative changes, but also consideration of the positive experience of other states.

Аннотация

В рамках уголовного судопроизводства следственные действия могут проводиться с участием несовершеннолетних, которые в силу возраста имеют более высокую степень психологической уязвимости. Следственная ситуация, в которой получаются показания несовершеннолетнего, является неблагоприятной для психики ребенка и несет риск долгосрочных психотравмирующих последствий.

Для снижения таких рисков в современном российском уголовном судопроизводстве более активным становится процессуальное участие психолога в производстве отдельных следственных действий. Но, поскольку данный участник появился в российском уголовном судопроизводстве относительно недавно, его привлечение к допросу несовершеннолетнего сопряжено с рядом трудностей. Существующие проблемы могут быть подразделены на процессуальные и организационные. Их разрешение требует не только научных исследований и законодательных изменений, но и учета позитивного опыта других государств.

Հիմնաբառեր՝ հոգեբան, անչափահաս, քրեական դատավարություն, քննչական գործողություններ, հարցաքննություն:

Keywords: psychologist, minor, criminal procedure, investigative actions, interrogation.

Ключевые слова: психолог, несовершеннолетний, уголовный процесс, следственные действия, допрос.



ՇՉԵՐԲԻՉ ԼՅՈՒԴՄԻԼԱ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՌԴ դատախազության համալսարանի օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում օրենքների կատարման նկատմամբ դատախազական հսկողության և քրեական դատավարությանը դատախազի մասնակցության ամբիոնի պրոֆեսոր

SHCHERBICH LYUDMILA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Professor of the Department of Prosecutor's Supervision for execution of laws in operative-investigative activities and participation of the prosecutor in criminal proceedings of the Russian Federation University of Prosecutor's Office

ЩЕРБИЧ ЛЮДМИЛА
Кандидат юридических наук, доцент, профессор кафедры прокурорского надзора за исполнением законов в оперативно-розыскной деятельности и участия прокурора в уголовном судопроизводстве Университета прокуратуры Российской Федерации

ՀԱՏՈՒԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ*

USAGE OF SPECIAL KNOWLEDGE IN CRIMINAL PROCEEDINGS: THEORY AND PRACTICE*

ИСПОЛЬЗОВАНИЕ СПЕЦИАЛЬНЫХ ЗНАНИЙ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ: ТЕОРИЯ И ПРАКТИКА*

Ամփոփագիր

Հատուկ գիտելիքների կիրառումը հանդիսանում է ցանկացած հանցագործության քննության, ինչու ոչ նաև դատարանում գործի քննության անբաժան մաս: Հատկանշական է, որ ավելի ու ավելի բարձր չափանիշներ են առաջադրվում հանցագործությունների բացահայտման և դատական և նախաքննության ընթացակարգերի նկատմամբ, մյուս կողմից էլ հանցագործությունների բացահայտման գործիքակազմի էական մասը կախված է գիտության և տեխնիկայի զարգացումից: Հատուկ գիտելիքների կիրառման հիմնական նպատակը հանցագործությունների բացահայտումն է, վերջիններիս կանխարգելումը, ինչպես նաև կանխարգելման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մարտավարական և տեխնիկական միջոցների և մեթոդների մշակումը:

Annotation

The implementation of a special knowledge is an indispensable component of the investigation of any crime, as well as judicial proceedings, since, on the one hand, higher requirements are imposed on the quality of preliminary and judicial investigation, on the other hand, a significant number of ways of committing crimes are characterized by the inclusion of the results of the development of science and technology. The main purpose of applying special knowledge is the crime detection and prevention, collection of nesessary information for mentioned activities, development of tactical and technical means and methods.

Аннотация

Реализация специальных знаний является непременной составляющей расследования любого преступления, а также судебного разбирательства, поскольку, с одной стороны, к качеству предварительного и судебного следствия предъявляются все более высокие требования, с другой – значительное количество способов совершения преступлений характеризуется включением результатов развития науки и техники. Целью применения специальных знаний всегда является содействие собиранию информации, необходимой для выявления, раскрытия, расследования и предупреждения преступлений, а также разработка тактических и технических средств и методов сбора информации.

Հիմնաբառեր՝ հատուկ գիտելիքներ, դատական փորձաքննություն, քրեական դատավարություն, ապացույցներ, պետական փորձագիտական կազմակերպություններ:

Keywords*:* special knowledge, forensic examination, criminal proceedings, evidence, state expert organizations.

Ключевые слова*:* специальные знания, судебная экспертиза, уголовное судопроизводство, доказательства, государственные экспертные организации.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINAL LAW AND CRIMINOLOGY / УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ
ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ARAKELYAN SERGEY
Rector of the Academy of Justice of the Republic of Armenia, Professor of the YSU Chair of Criminal Law, Doctor of Legal Sciencies, Professor

АРАКЕЛЯН СЕРГЕЙ
Ректор Академии юстиции Республики Армения, профессор кафедры уголовного права ЕГУ, доктор юридических наук, профессор

ՇՈՐԹՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ*

SOME PROBLEMS OF CRIMINAL-LEGAL QUALIFICATION OF EXTORTION*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ КВАЛИФИКАЦИИ ВЫМОГАТЕЛЬСТВА*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկվել են շորթման քրեաիրավական որակման հետ կապված որոշ հիմնախնդիրներ: Այդ կապակցությամբ, նախ, նշվել է, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքում այն նախատեսված է որպես սեփականության դեմ ուղղված՝ հափշտակության հատկանիշներ չպարունակող հանցագործություն:

Միևնույն ժամանակ, հեղինակն անդրադարձ է կատարել քննարկվող հանցագործության օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների վերլուծությանը: Մասնավորապես, նշվել է, որ ՀՀ քր օր-ի հոդված 258-ով նախատեսված, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված մյուս բոլոր հանցագործությունների տեսակային օբյեկտը սեփականությունն է ընդհանրապես: Այսինքն՝ հասարակական այն հարաբերությունները, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետումը, տնօրինումը և օգտագործումը:

Բացի այդ, հոդվածում հիմնավորվել է, որ շորթման փորձ, որպես կանոն, հնարավոր չէ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ պահանջը սխալմամբ ներկայացվում է ոչ թե գույքի օրինական տիրապետողին, այլ պատահական, կողմնակի անձի:

Հեղինակը կարծիք է արտահայտել նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 258-ով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Բանն այն է, որ ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի գործողություն կատարելու կամ գույքային բնույթի պարտավորություն ստանձնելու կամ գույքային իրավունք ձեռք բերելուց ձեռնպահ մնալու պահանջ ներկայացնելը, նրա կարծիքով, տվյալ դեպքում կա՛մ հանցավորի նպատակն է, կա՛մ նպատակին հասնելու միջոցը:

Annotation

Some problems associated with the criminal-legal qualification of extortion are discussed in this article. In this regard, first of all, it is noted that in the current Criminal Code of the Republic of Armenia this criminal act is provided for as a crime against property that does not contain any signs of theft.

At the same time, the author analyzes the signs characterizing the object, the objective side, as well as the subject and subjective side of extortion. In particular, it is noted that the specific object of both the criminal act under study and all other crimes against property are social relations regulating the ownership, use and disposal of property.

In addition, the article substantiates that attempted extortion is, as a rule, impossible. The exception are those cases when the corresponding demand is erroneously presented not to the owner or other legal owner but to another person.

The author also expresses the opinion that the subjective side of the crime, prescribed by Article 258 of the Criminal Code of the Republic of Armenia, is characterized only by direct intent. The fact is that the criminal's presentation of a demand to the owner or other legal owner to transfer to him or persons indicated by him certain property or rights to property or to perform some actions in their favor, etc., in the author's opinion, is either his goal or mean of achieving it.

Аннотация

В статье рассмотрены некоторые проблемы, связанные с уголовно-правовой квалификацией вымогательства. В этой связи прежде всего отмечается, что в действующем Уголовном кодексе Республики Армения данное деяние предусмотрено как преступление против собственности, не содержащее признаков хищения.

В то же время автором анализируются признаки, характеризующие объект, объективную сторону, а также субъект и субъективную сторону вымогательства. В частности, отмечается, что видовым объектом как исследуемого преступного деяния, так и всех остальных преступлений против собственности являются общественные отношения, направленные на владение, пользование и распоряжение имуществом.

Кроме того, в статье обосновывается, что покушение на вымогательство, как правило, невозможно. Исключением являются случаи, когда соответствующее требование ошибочно предъявляется не собственнику или иному законному владельцу, а другому лицу.

Автором высказывается также мнение о том, что субъективная сторона преступления, предусмотренного статьей 258 УК РА, характеризуется только прямым умыслом. Дело в том, что предъявление преступником собственнику или иному законному владельцу требования передать ему или указанным им лицам определенного имущества или права на имущество либо совершить в их пользу какие-то действия и т.д., по мнению автора, является либо его целью, либо средством ее достижения.

Հիմնաբառեր՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություն, շորթում, շորթման օբյեկտ, շորթման օբյեկտիվ կողմ, շորթման սուբյեկտ, շորթման սուբյեկտիվ կողմ, շորթման և ավազակության սահմանազատում

Keywords: crime against property, extortion, object of extortion, objective side of extortion, subject of extortion, subjective side of extortion, differentiation of extortion and robbery.

Ключевые слова: преступление против собственности, вымогательство, объект вымогательства, объективная сторона вымогательства, субъект вымогательства, субъективная сторона вымогательства, разграничение вымогательства и разбоя.

ԿԱՄՉԱՏՈՎ ԿԻՐԻԼ
Իրավ. գիտ. թեկնածու, ՌԴ դատախազության համալսարանի ԳՀԻ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում օրենքների կատարման նկատմամբ դատախազական հսկողության և քրեական դատավարությանը դատախազի մասնակցության գիտական աջակցության բաժնի վարիչ

KAMCHATOV KIRILL
Candidate of Legal Sciences, Head of the SRI Department of Prosecutor's Supervision for execution of laws in operative-investigative activities and participation of the prosecutor in criminal proceedings of the Russian Federation University of Prosecutor's Office

КАМЧАТОВ КИРИЛЛ
Кандидат юридических наук, заведующий отделом научного обеспечения прокурорского надзора за исполнением законов при осуществлении оперативно-розыскной деятельности и участия прокурора в уголовном судопроизводстве НИИ Университета прокуратуры Российской Федерации

ԱՐԻՍՏԱՐԽՈՎ ԱԼԵՔՍԵՅ
Իրավ. գիտ. թեկնածու, ՌԴ դատախազության համալսարանի ԳՀԻ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում օրենքների կատարման նկատմամբ դատախազական հսկողության և քրեական դատավարությանը դատախազի մասնակցության գիտական աջակցության բաժնի առաջատար գիտաշխատող

ARISTARKHOV ALEXEY
Candidate of Legal Sciences, leading researcher of the SRI Department of Prosecutor's Supervision for execution of laws in operative-investigative activities and participation of the prosecutor in criminal proceedings of the Russian Federation University of Prosecutor's Office

АРИСТАРХОВ АЛЕКСЕЙ
Кандидат юридических наук, ведущий научный сотрудник отдела научного обеспечения прокурорского надзора за исполнением законов при осуществлении оперативно-розыскной деятельности и участия прокурора в уголовном судопроизводстве НИИ Университета прокуратуры Российской Федерации

«ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ» ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ON THE ISSUE OF REGULATING POSSIBILITIES COUNTERACTING TO «TELEPHONE» FRAUD*

К ВОПРОСУ О РЕГЛАМЕНТАЦИИ ВОЗМОЖНОСТЕЙ ПРОТИВОДЕЙСТВИЯ «ТЕЛЕФОННЫМ» МОШЕННИЧЕСТВАМ*

Ամփոփագիր

Հոդվածում քննարկման առարկա են դարձել տեղեկատվական ոլորտում հանցագործությունների դեմ ուղղված միջոցառումները: Համալիր ուսումնասիրության են ենթարկվել «հեռախոսային խարդախություններին» վերաբերող նորմատիվ իրավական ակտերի դրույթները, որոնք վերաբերում են տվյալ հանցագործությունների ոլորտում նախաքննական և հետաքննական մարմինների գործողություններին, վերջիններիս նկատմամբ դատախազական հսկողությանը, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի պարզաբանումները:

Annotation

The article considers a set of measures of counteracting crimes in the field of information and telecommunication technologies, which include "telephone fraud". The content of this complex includes normative legal acts, including codified ones, the provisions of which define issues of prosecutorial supervision on the procedural activities of the bodies of inquiry and preliminary investigation, as well as the legal positions of the Constitutional Court of the Russian Federation, explanations of the Plenum of the Supreme Court of the Russian Federation on problematical issues of law enforcement practice.

Аннотация

В статье рассматривается комплекс мер, направленных на противодействие преступлениям в сфере информационно-телекоммуникационных технологий, к числу которых относятся «телефонные мошенничества». В содержание данного комплекса входят нормативные правовые акты, в том числе кодифицированные, положения которых предусматривают вопросы прокурорского надзора за процессуальной деятельностью органов дознания и органов предварительного следствия, а также правовые позиции Конституционного Суда Российской Федерации, разъяснения Пленума Верховного Суда Российской Федерации по актуальным вопросам право-применительной практики.

Հիմնաբառեր՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործություններ, «հեռախոսային» խարդախություններ, հափշտակություններ, դատախազական հսկողություն, դատական վերահսկողություն:

Keywords: crimes in the field of information and telecommunication technologies, «telephone» fraud, embezzlement, prosecutor's supervision, judicial control.

Ключевые слова: преступления в сфере информационно-телекоммуникационных технологий, «телефонные» мошенничества, хищения, прокурорский надзор, судебный контроль.

ՆՈՎԻԿՈՎԱ ԵԿԱՏԵՐԻՆԱ
Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Բելառուսի պետական համալսարանի դատավորների, դատարանների, դատախազության և արդարադատության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստման և որակավորման բարձրացման ինստիտուտ» կրթական հաստատության դատական գործունեության ամբիոնի վարիչ

NOVIKOVA EKATERINA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Head of Chair of the educational institution «Institute for Retraining and Qualification Upgrading of Judges, Prosecutors and Legal professionals at the Belarusian State University»

НОВИКОВА ЕКАТЕРИНА
Кандидат юридических наук, доцент заведующий кафедрой судебной деятельности УО «ИППК судей, работников прокуратуры, судов и учреждений юстиции Белорусского государственного университета»

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ. ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ILLEGAL TRAFFICKING OF DRUGS AND PSYCHOTROPIC SUBSTANCES: COMPARATIVE LEGAL ANALYSIS OF THE CRIMINAL LEGISLATION OF THE REPUBLIC OF BELARUS AND THE REPUBLIC OF ARMENIA*

НЕЗАКОННЫЙ ОБОРОТ НАРКОТИЧЕСКИХ СРЕДСТВ И ПСИХОТРОПНЫХ ВЕЩЕСТВ: СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ УГОЛОВНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածում հեղինակը հանգամանալից ուսումնասիրել է Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քրեական օրենքների գործող նորմերը, որոնք պատասխանատվություն են սահմանում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների (այսուհետ՝ թմրամիջոցներ) ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործությունների համար: Այս նորմերի համեմատական իրավական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել վտանգավոր հոգեակտիվ նյութերի անօրինական տարածումից հանրային առողջության քրեաիրավական պաշտպանության և՛ առավելությունները, և՛ թերությունները: Համեմատական առումով քննարկվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում հանցագործությունների սոցիալական վտանգավորությունը և հանցավոր անիրավությունը: Բացահայտվում են քրեաիրավական պաշտպանության ընդհանուր, կոնկրետ և ուղղակի օբյեկտները: Համեմատության է ենթարկվում քննարկվող հանցագործությունների քրեականացման ծավալների և քրեական պատասխանատվության տարբերակման աստիճանը: Բացահայտվում են տերմինաբանական տարբերությունները, ինչպես նաև տարբեր իրավական մեթոդների կիրառումը: Ուշադրություն է դարձվում վերլուծվող հանցագործությունների կատարման պատժելիության հատկանիշներին:

Սահմանվում են տարբեր օրենսդրական մոտեցումներ՝ երկու երկրների օրենսդիրների կողմից Քրեական օրենսգրքի հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության միջոցների խստության աստիճանը որոշելու համար: Ցույց է տրվում, որ երկու պետությունների քրեական օրենսգրքերն ունեն և՛ նմանատիպ դիրքորոշումներ, և՛ տարբերակիչ հատկանիշներ, որոնք պահանջում են ուսումնասիրություն և գնահատում:

Annotation

In the article, the author examines in detail the current norms of the criminal laws of the Republic of Belarus and the Republic of Armenia, establishing criminal liability for crimes in the field of illegal circulation of narcotic drugs, psychotropic substances, their precursors and analogues (hereinafter referred to as drugs). A comparative legal analysis of these norms allows to identify both the advantages and disadvantages of criminal law protection of public health from the illegal distribution of dangerous psychoactive substances. In a comparative aspect, the social danger and criminal wrongfulness of crimes in the field of drug circulation are examined. General, specific and direct objects of criminal legal protection are identified. Legislative approaches to designating the subject of the group of crimes under consideration are compared. A comparison is made between volume of criminalization and the degree of differentiation of criminal liability. Terminological differences are revealed, as well as the use of divergent legal techniques. Attention is paid to the characteristics of punishability for committing the crimes under analysis. Different legislative approaches are established to determine the degree of severity of criminal liability measures provided for by the legislators of the two countries in the sanctions of articles of the Criminal Code. It is shown that the Criminal Codes of the two states have both similar positions and distinctive features that require study and evaluation.

Аннотация

В статье автор подробно рассматривает действующие нормы уголовных законов Республики Беларусь и Республики Армения, устанавливающие уголовную ответственность за преступления в сфере незаконного оборота наркотических средств, психотропных веществ, их прекурсоров и аналогов (далее – наркотики). Сравнительно-правовой анализ данных норм позволяет выявить как достоинства, так и недостатки уголовно-правовой охраны здоровья населения от незаконного распространения опасных психоактивных веществ. В сравнительном аспекте исследуется общественная опасность и уголовная противоправность преступлений в сфере незаконного оборота наркотиков. Выявляются родовой, видовой и непосредственный объекты уголовно-правовой охраны. Сравниваются законодательные подходы к обозначению предмета рассматриваемой группы преступлений. Проводится сравнение объема криминализации и степени дифференциации уголовной ответственности. Выявляются терминологические различия, а также использование несовпадающих приемов юридической техники. Уделяется внимание характеристике наказуемости за совершение анализируемых преступлений. Устанавливаются разные законодательные подходы к определению степени жесткости мер уголовной ответственности, предусмотренных законодателем двух стран в санкциях статей Уголовного кодекса. Показано, что Уголовные кодексы двух государств имеют как схожие позиции, так и отличительные особенности, требующие изучения и оценки.

ՍԻՄՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՀ ՊՎԾ իրավական ապահովման և օրինականության վերահսկողության վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ

SIMONYAN TIGRAN
Head of the Department of Legal Support and Control of legality of the RA State Supervision Service Candidate of Legal Sciencies, Docent of the YSU Chair of Criminal Law

СИМОНЯН ТИГРАН
Начальник управления правового обеспечения и контроля законности Службы государственного контроля РА, кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՍԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ» ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ*

SOME QUESTIONS REGARDING LEGAL REGULATIONS ON CRIMES «AGAINST SEXUAL INTEGRITY AND SEXUAL FREEDOM» ACCORDING TO THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA*

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ ПРАВОПРЕДПИСАНИЙ, УСТАНАВЛИВАЮЩИХ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ «ПОЛОВОЙ НЕПРИКОСНОВЕННОСТИ И ПОЛОВОЙ СВОБОДЫ» ПО НОВОМУ УК РА*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված «Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության» դեմ ուղղված հանցագործությունների իրավակարգավորումներին առնչվող մի շարք վիճահարույց հարցերի ուսումնասիրությանը: Հոդվածի շրջանակներում համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք կարող են բացասաբար ազդել հանցագործությունների որակման գործընթացի վրա՝ խաթարելով իրավակիրառ գործունեության բնականոն ընթացքը: Հոդվածի շրջանակներում ներկայացվել են օրենսդրության լրամշակմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Մասնավորապես նշվել է, որ նոր օրենսդրությամբ միավորվել են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը, սակայն բռնաբարության վտանգավորությունն ավելի բարձր է, քան սեքսուալ բնույթի բռնի այլ գործողություններինը, և դրա առանձին նախատեսման հիմնահարցը բաց է մնում:

Փաստվել է, որ առավել քան տարօրինակ է սեռական հարաբերության նմանակումը՝ որպես սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման առանձնացումը: Սեռական հարաբերության նմանակումը կամ «իմիտացիան» առավել բնորոշ է երեխաներին, երբ վերջիններս փորձում են նմանակել իրենց ծնողների կամ այլ չափահասների սեքսուալ հարաբերությունները: Անդրադարձ է կատարվել նաև ծանրացնող հանգամանքների ոչ հաջող ձևակերպմանը, ինչի արդյունքում՝ քննարկվող հոդվածի իմաստով 12 տարին չլրացած անձը այլևս չի համարվում անօգնական վիճակում գտնվող:

Քննարկվել են նաև «առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի» ձևակերպման խնդրահարույց տարրերը: Մասնավորապես, արձանագրվել է, որ կոնվենցիոն նորմերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցատեսակների արհեստական ներմուծումը մեր քրեական օրենսդրության մեջ, առանց դրանք տեղայնացնելու և հաշվի առնելու ազգային օրենսդրության առանձնահատկությունները, կարող է ունենալ խիստ բացասական հետևանքներ:

Annotation

The article is devoted to the study of a number of controversial issues related to the legal regulation of crimes against "Sexual freedom and sexual inviolability" provided by the new Criminal Code of the Republic of Armenia. Within the framework of the article, based on a comparative analysis, many problems have been identified that can negatively affect the process of qualifying crimes, disrupting the normal course of law enforcement activities. Within the framework of the article, a number of recommendations for changing the legislation are given. In particular, it was noted that the crimes of rape and sexual assault are united by the new legislation, but the risk of rape is higher than other sexual assault and the question of its separate includance remains open.

It is stated that it is more than strange to single out “imitation of sexual intercourse” as a form of the sexual assault. Imitation of sexual intercourse is most common for children when they try to imitate sexual relations of their parents or other adults. Reference was also made to the unfortunate wording of aggravating circumstances, whereby a person who has not reached the age of 12 within the meaning of the article under discussion is no longer considered to be in a helpless state.

The problematic elements of the wording "without the reasonable consent of the victim" are discussed. It has been recorded that the artificial introduction of conventional norms into our criminal legislation, as well as crimes provided for by the criminal legislation of foreign states, without their localization and without taking into account the peculiarities of national legislation, can have very negative consequences.

Аннотация

Статья посвящена исследованию ряда спорных вопросов, связанных с правовым регулированием преступлений против «Половой свободы и половой неприкосновенности», предусмотренных новым Уголовным кодексом Республики Армения. В рамках статьи на основе сравнительного анализа выявлено множество проблем, способных негативно повлиять на процесс квалификации преступлений, нарушив нормальный ход правоохранительной деятельности. В рамках статьи дан ряд рекомендаций по изменению законодательства. В частности, отмечается, что изнасилование и насильственные действия сексуального характера новым законодательством объединены в одну статью, однако опасность изнасилования выше, чем в случае других насильственных действий сексуального характера, и вопрос о его отдельном закреплении остается открытым.

Констатируется, что выделение «имитации полового акта» как проявления объективной стороны насильственных действий сексуального характера более чем странно. Имитация полового акта чаще всего встречается у детей, когда они пытаются имитировать половые отношения своих родителей или других взрослых. Упоминается также о неудачной формулировке отягчающих обстоятельств, вследствие чего лицо, не достигшее 12-летнего возраста по смыслу обсуждаемой статьи, уже не считается находящимся в беспомощном состоянии.

Обсуждаются также проблемные элементы формулировки «без разумного согласия потерпевшего». В данной связи фиксируется, что искусственное введение в наше уголовное законодательство конвенционных норм, а также преступлений, предусмотренных уголовным законодательством иностранных государств, без их локализации и без учета особенностей национального законодательства может иметь весьма негативные последствия.

Հիմնաբառեր՝ մարդու սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակներ, ՀՀ քրեական նոր օրենսգիրք, բռնաբարություն և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, սեռական ներթափանցում, 12 տարին չլրացած անձ, համաձայնության ողջամիտ համոզմունք, մանկական պոռնոգրաֆիա, գրուումինգ:

Keywords: crimes against sexual freedom and inviolability, the new Criminal Code of the Republic of Armenia, rape and sexual violence, imitation of a sexual intercourse or satisfaction of a sexual need, sexual penetration, a person under 12 years of age, consent to sexual activity, child pornography, grooming.

Ключевые слова: преступления против половой свободы и неприкосновенности человека; новый Уголовный кодекс РА; изнасилование и насильственные действия сексуального характера; имитация полового акта или удовлетворение половой потребности; половое проникновение; лицо, не достигшее 12-летнего возраста; уверенность в согласии; детская порнография; груминг.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / INTERNATIONAL PUBLIC LAW / МЕЖДУНАРОДНОЕ ПУБЛИЧНОЕ ПРАВО

ԿԱԼՈՒԳԱՐՈՒ ԿՈՐԻՆԱ
Կարիերային դիվանագետ, Քիշնևի պետական համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի դեպարտամենտի ասպիրանտ

CĂLUGĂRU CORINA
Career Diplomat, PhD Student of the Chişinău State University Department of International and European Law

КАЛУГАРУ КОРИНА
Карьерный дипломат, аспирант департамента международного и европейского права Кишиневского государственного университета

ՀԱՄԱՑԱՆՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

THE INTERNET AND PUBLIC INTERNATIONAL LAW*

ИНТЕРНЕТ И МЕЖДУНАРОДНОЕ ПУБЛИЧНОЕ ПРАВО*

Ամփոփագիր

Տվյալ հոդվածի հիմնական նպատակն է փորձել բացահայտել, թե համացանցի զանգվածային տարածումը, սոցիալական, տնտեսական և մշակութային անգնահատելի հետևանքներից բացի, ինչ ազդեցություն է ունեցել ընդհանուր առմամբ միջազգային իրավական համակարգի գործողության վրա:

Մասնավորապես, նշվում է, որ այսօր համացանցն իրողություն է, սակայն հստակ ընդգծված չէ դրա տեղը միջազգային իրավունքում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում որոշելու միջազգային իրավունքի և համացանցային տեխնոլոգիաների սահմանագծերը, ինչպես նաև բացահայտելու դրանց՝ մեկը մյուսի վրա ազդեցությունը: Մեր օրերում, փաստորեն, համացանցը հասարակական կյանքի կարևորագույն չափորոշիչներից է: Այն հանդիսանում է թե՛ որպես հանրային տարածություն, թե՛ հասարակական կարգի ինքնուրույն ճյուղ և թե՛ հանրային շահի նշանակալի ռեսուրս: Համացանցը ստեղծում է մի աշխարհ, որտեղ մուտք կարող են գործել բոլորը՝ առանց ռասայով, գույքային դրությամբ, ռազմական հզորությամբ կամ ծննդավայրով պայմանավորված արտոնությունների կամ նախապաշարմունքների: Այդ աշխարհում յուրաքանչյուրը և ցանկացած եղանակով կարող է անկաշկանդ արտահայտել իր համոզմունքները, որքան էլ յուրահատուկ դրանք լինեն, առանց մտավախության, որ իրեն կարող են հարկադրել լռելու կամ ենթարկվելու:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ համացանցի փոփոխությունները ցանկացած պարագայում հանգեցնում են տնտեսական և քաղաքական գործունեության հանրային ու մասնավոր կարգավորման նոր իրավական կառուցակարգերի զարգացմանը, ինչպես նաև նպաստում են հանրային իրավունքի ավանդական այնպիսի ինստիտուտների

կատարելագործմանը, ինչպիսիք են Հեռահաղորդակցությունների միջազգային միությունը և մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը:

Ամփոփելով հետազոտությունը՝ հեղինակը նշում է, որ միջազգային իրավունքը պետություն-ների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցության յուրահատուկ գործիք է: Համացանցում մեծ թվով համաձայնագրերի և պայմանագրերի առկայության առավելությունն այն է, որ դրանով պայմանավորված՝ զգալիորեն նվազում են համապատասխան իրավակարգավորումներում առկա հակասությունները, ինչն էլ նպաստում է ուսումնասիրվող ոլորտում ժողովրդավարության զարգացմանը և արդարության ամրապնդմանը:

Annotation

The main aim of this article is to try and understand how the massive spread of the Internet - which certainly had immeasurable social, economic and cultural consequences - has also had an impact on the systematic way the international legal system – taken as a whole – works and, in particular, on the way the same exercises its main functions.

It is mentioned that now Internet is a reality but without a clear place in the international law and we are dealing in the frame of the international law and Internet technology and how they have and will affect each other. In fact, the Internet is now an essential parameter of social life. It operates there both as a public space, a field of public order and a resource of public interest. The Internet is creating a world that all may enter without privilege or prejudice accorded by race, economic power, military force, or place of birth. It has created a world where anyone, anywhere may express his or her beliefs, no matter how singular, without fear of being coerced into silence or conformity.

In any event, changes in information communication technology, including but not limited to the Internet, are causing the development of new public law structures for public and private regulation of commercial and political activities making use of these technologies, and also are causing the redesign and streamlining of traditional public law institutions such as the International Telecommunications Union and the World Intellectual Property Organization.

In conclusion it is mentioned that International law plays a role as a tool for cooperation among states and other stakeholders. The advantage of having more international treaties and agreements in the Internet field is that regulatory conflicts would be diminished to a large extent and will prove itself with the introduction of more democracy and justice in this field.

Аннотация

Основная цель настоящей статьи – попытаться понять, как массовое распространение Интернета, которое, безусловно, имело неизмеримые социальные, экономические и культурные последствия, также оказало влияние на систематический подход к работе международной правовой системы в целом. В частности, отмечается, что сегодня Интернет стал реальностью, однако без четкого обозначения его места в международном праве. Следовательно, мы имеем дело с определением рамок международного права и интернет-технологий и того, как они влияют и будут влиять друг на друга.Фактически, Интернет сейчас – это важнейший параметр общественной жизни.

Он функционирует и как общественное пространство, и как отрасль общественного порядка, и как ресурс общественного интереса. Интернет создает мир, в который могут войти все без привилегий и предубеждений, обусловленных расой, экономическим состоянием, военной мощью или местом рождения. В этом мире каждый и как угодно может выражать свои убеждения, какими бы уникальными они ни были, не опасаясь быть принужденным к молчанию или подчинению.

В любом случае, изменения в информационно-коммуникационных технологиях, включая Интернет, но не ограничиваясь им, вызывают развитие новых публично-правовых структур публичного и частного регулирования коммерческой и политической деятельности с использованием этих технологий, а также способствуют преобразованию и рационализации традиционных институтов публичного права, таких как Международный союз телекоммуникаций и Всемирная организация интеллектуальной собственности.

Обобщая исследование, автор отмечает, что международное право играет роль инструмента сотрудничества между государствами и другими заинтересованными сторонами. Преимущество наличия большего количества международных договоров и соглашений в сфере Интернета заключается в том, что нормативные противоречия будут в значительной степени уменьшены, а последнее поспособствует развитию демократии и утверждению справедливости в исследуемой области.

Հիմնաբառեր՝ Ինտերնետ, համակարգչային ցանց, իրավական նկարագրություն, միջազգային իրավական համակարգ, միջազգային հանրային իրավունք, համացանցի տեղը միջազգային իրավունքում:

Keywords: Internet, computer net, legal definition, international legal system, public international law, place of the Internet in the international law.

Ключевые слова: Интернет, компьютерная сеть, правовое предписание, международная право-вая система, международное публичное право, место Интернета в международном праве.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ / INITIAL AND CONTINUOUS TRAINING / ПРОФЕССИОНАЛЬНАЯ ПОДГОТОВКА И ПЕРЕПОДГОТОВКА

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ՀՀ արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման և ՏՏ դեպարտամենտի ղեկավար

KHURSHUDYAN ARTASHES
Doctor of Sociology, Head of the RA Academy of Justice Department of Distance Learning and IT

ХУРШУДЯН АРТАШЕС
Кандидат социологических наук, руководитель департамента дистанционного обучения и ИТ Академии юстиции Армении

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ*

IMPACT OF ARTIFICIAL INTELLIGENCE ON MODERN LEARNING AND EDUCATION*

ВЛИЯНИЕ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА НА СОВРЕМЕННОЕ ОБУЧЕНИЕ И ОБРАЗОВАНИЕ*

Ամփոփագիր

Սույն հոդվածն անդրադառնում է արհեստական բանականությանը և դրա ազդեցությանն ուսուցման և կրթության վրա: Ներկայացվում են արհեստական բանականության ոլորտում որոշ զարգացումներ, և այն հնարավորությունները, որոնք արհեստական բանականությունն ընձեռում է կրթության ոլորտում: Քննարկվում են կրթության էլիտարիզմը և դրա իրականացման հիմնական կրթական մեթոդը՝ առկա ուսուցումը, կրթության ժողովրդավարացումը, ճկունությունը, ինքնակրթությունը, շարունակական կամ ցկյանս կրթությունը և դրանց իրականացման հիմնական ուսումնական մեթոդը՝ էլեկտրոնային ինտերակտիվ ուսուցումը:

Անդրադարձ է կատարվում նաև արհեստական բանականության տեսակներին՝ հասկանալու համար, թե ինչպես կարող է արհեստական բանակությունը լրացնել և բարելավել ժամանակակից ուսուցումը և կրթությունը: Այդ նպատակով ներկայացվում են արհեստական բանականության հետ փոխկապված մի շարք կարևոր հասկացություններ:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև, թե ինչպես է արհեստական բանականությունը փոխակերպում աշխատանքի շուկան, մասնագիտությունները, ինչպես է ազդում գործազրկության վրա: Ներկայացվում են նաև արհեստական բանականության զարգացման արդյունքում աշխատանքի որոշ տեսակների փոփոխության հավանականությունը և արհեստական բանականության ազդեցությունն էլեկտրոնային ուսուցման հարթակների, լուծումների և կրթական կառուցվածքների կատարելագործման և արդիականացման վրա: Հատուկ անդրադարձ է կատարվում նաև իրավաբանական կրթության ապահովման տիրույթում արհեստական բանականության կիրառման հնարավորություններին:

Annotation

The article talks about Artificial intelligence and its impact on learning and education. Some developments in the field of artificial intelligence are presented, and possibilities that Artificial Intelligence empowers education field with are also covered.

The concepts of elitarism in education and its main implementation method-face to face learning is presented. Modern educational paradigms - democratization of education, flexibility of learning, self-directed learning, contenuous and life time learning and their main implementation method - interactive e-learning are addressed as well. Article also talks about the types of Artificial Intelligence to understand how it may augment and improve modern learning and education. The article also touches upon how Artificial Intelligence transforms labour market and professions, and how it impacts the unemployment. The probability of change of some types of jobs as a result of development of Artficial Intelligence is presented as well. The article also introduces the impact of Artificial Intellgence on the improvement and modernization of e-learning platforms, solutions and educational structures. The possiblities of the use of Artificial intelligence in the field of legal education are specifically presented in the article as well.

Аннотация

Статья посвящена искусственному интеллекту и его влиянию на обучение и образование. В статье представлены некоторые направления развития искусственного интеллекта, а также возможности, которые искусственный интеллект предоставляет в сфере образования. В статье представлены концепция элитаризма в образовании и очное обучение как основной метод осуществления элитаризма в образовании, а также демократизация образования, гибкость обучения, самообучение, непрерывность обучения или обучение в течении всей жизни и электронное интерактивное обучение, как основной образовательный метод для осуществления вышеназванных образовательных парадигм.

Представляются также типы искусственного интеллекта для того, чтобы понять, как искусственный интеллект может дополнить и улучшить современное обучение и образование. С этой целью рассмотрен также ряд важных понятий, которые взаимосвязаны с искусственным интеллектом. В статье рассматривается также, как искусственный интеллект преобразовывает рынок труда и профессии и как влияет на безработицу, а также вероятность изменения некоторых типов труда в результате развития искусственного интеллекта.

В статье проанализировано также влияние искусственного интеллекта на совершенствование и модернизацию платформ и решений электронного обучения и образовательных структур. Кроме того, обсуждаются возможности использования искусственного интеллекта в сфере юридического образования.

Հիմնաբառեր՝ արհեստական բանականություն, մեծ տվյալներ, մեքենայացված ուսուցում, խորքային ուսուցում, անհատականացված ուսուցում, ադապտացվող ուսուցում

Վերոնշյալ հարցադրումների ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են այն նախադրյալները, որոնք էական նշանակություն ունեն հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի գնահատման համատեքստում և յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկման առարկա դարձվեն Դատարանի կողմից:

Annotation

The article is dedicated to examining issues of both theoretical and practical significance related to the correlation between the *substantive nature of a claim* and the *statement of claim* as its procedural expression. Accordingly, it presents a comparative analysis of the *preconditions for the emergence of the right of action* and the *formal requirements applicable to the statement of claim*, as well as discusses practical gaps that arise concerning certain preconditions for the exercise of the right of action and proposes corresponding legal solutions.

The paper examines extrajudicial appeal procedures and the observance of statutory time limits established for such appeals as preconditions for the emergence of the right of claim, as well as analyzes certain practical issues arising in connection therewith.

The study addresses these matters not only from a doctrinal but also from a practical standpoint, revealing their direct connection with and impact on the procedural mechanisms applied during the *admissibility stage of the statement of claim*, in particular concerning the *assessment of these preconditions within the scope of the Court's jurisdiction* and the identification of the resulting procedural consequences.

As a result of the study, the author identifies those preconditions that bear substantial significance for assessing the *admissibility of a statement of claim* and emphasizes that each of them must, in every case, be duly examined by the Court.

Аннотация

Статья посвящена исследованию вопросов теоретико-практического характера, связанных с соотношением *существенного (материально-правового) характера иска* и *искового заявления* как его процессуального выражения. В этой связи проводится сравнительный анализ *предпосылок возникновения и осуществления права на иск* и *формальных требований, предъявляемых к исковому заявлению*, а также рассматриваются практические пробелы, возникающие при реализации отдельных предпосылок данного права, и предлагаются соответствующие правовые решения.

В работе исследуются внесудебное обжалование и соблюдение установленных сроков для такого обжалования как предпосылки возникновения права на иск, а также рассматриваются некоторые практические проблемы, возникающие в связи с этим.

Изучение указанных вопросов проведено не только в доктринальном, но и в практическом аспекте, что позволило выявить их непосредственную связь и влияние на *процессуальные механизмы стадии принятия искового заявления к производству*, в частности, на *оценку данных предпосылок в пределах компетенции суда* и установление вытекающих последствий.

В результате исследования выделены те предпосылки, которые имеют существенное значение в контексте *оценки допустимости искового заявления*, и подчёркнута необходимость их обязательного рассмотрения судом в каждом конкретном случае.

Հիմնաբառեր՝ հայց, վարչական հայց, հայցադիմումը, հայցի իրավունք, դատարան դիմելու իրավունքի ծագման նախադրյալներ, հայցադիմումին ներկայացվող պահանջներ, արտադատական բողոք, հայց ներկայացնելու ժամկետներ, շահագրգիռ սուբյեկտ:

Key words: action, administrative action, claim, right of action, preconditions for the emergence of the right to apply to the court, procedural requirements for the claim, extra-judicial complaint, time limits for filing a claim, interested party.

Ключевые слова: иск, административный иск, исковое заявление, право на иск, предпосылки возникновения права на обращение в суд, процессуальные требования к исковому заявлению, внесудебная жалоба, сроки подачи иска, заинтересованное лицо.

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

GALSTYAN ANAHIT
Head of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-methodological activities of the Academy of Justice RA, Postgraduate student of the YSU Chair of Constitutional Law

ГАЛСТЯН АНАИТ
Руководитель отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции РА, аспирант кафедры конституционного права ЕГУ

ՏԻՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ: ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

LOCAL GOVERNMENT STRUCTURE AND BODIES IN YEREVAN. DESCRIPTION OF STRUCTURAL UNITS AND THEIR FUNCTIONS*

СТРУКТУРА И ОРГАНЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ЕРЕВАНЕ. ОПИСАНИЕ СТРУКТУРНЫХ ЕДИНИЦ И ИХ ФУНКЦИЙ*

Ամփոփագիր

Երևանը, հանդիսանալով ՀՀ մայրաքաղաքը, միաժամանակ առանձնահատուկ կարգավիճակ ունեցող համայնք է, որի կառավարման մոդելը տարբերվում է ՀՀ մյուս համայնքների կառավարման ձևերից: Տեղական ինքնակառավարման կառուցվածքը մայրաքաղաքում ենթարկվում է առանձին կարգավորման՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, որը ոչ միայն ամրագրում է կառավարման մարմինների տեսակներն ու լիազորությունները, այլև՝ սահմանում է դրանց փոխհարաբերությունները համայնքային բնակչության, ավագանու, քաղաքապետարանի և պետական մարմինների միջև: Երևանի տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկությունն այն է, որ այն համատեղում է և՛ քաղաքական, և՛ վարչական տարրեր և ունի բազմաշերտ կառուցվածք՝ ներառելով ավագանին, քաղաքապետին, քաղաքապետարանը և վարչական շրջանների ղեկավարներին:

Հոդվածում համակողմանիորեն ուսումնասիրելով Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը՝ վեր հանելով դրանց իրավական հիմքերը, գործառույթների բաշխման տրամաբանությունը, փոխկապակցվածությունը և գործնական խնդիրները՝ հեղինակը եզրահանգել է, որ Երևանի տեղական ինքնակառավարման համակարգը ներկայումս գտնվում է ինստիտուցիոնալ կայունության և ժողովրդավարության միջև բարդ հավասարակշռության կետում: Դրանից դուրս գալու համար անհրաժեշտ է վերասահմանել ավագանու, քաղաքապետի և վարչական միավորների գործառույթները, ամրապնդել փոխադարձ վերահսկողությունը և առավել մեծ տարածք հատկացնել հանրային ներգրավվածությանը:

Annotation

Yerevan, as the capital of the Republic of Armenia, is also a municipality with special status, whose model of governance differs from those of other municipalities in the Republic of Armenia. The structure of local self-government in the capital is regulated separately under the RA Law “On Local Self-Government in the City of Yerevan,” which not only establishes the types and powers of government bodies, but also defines their interaction between the community population, the council of elders, the municipality, and state bodies.

The peculiarity of Yerevan's local self-government system is that it combines both political and administrative elements and has a multi-level structure that includes the council of elders, the mayor, the municipality, and the heads of administrative districts. After thoroughly examining the structure of Yerevan's local government bodies in the article, revealing their legal basis, the logic of the distribution of functions, interdependence, and practical issues, the author concluded that Yerevan's local government system is currently in a difficult position of balancing institutional stability and democracy. To overcome this, it is necessary to review the functions of the council, the mayor, and the administrative units, strengthen mutual control, and allocate more space for public participation.

Аннотация

Ереван, являясь столицей Республики Армения, одновременно является общиной с особым статусом, модель управления которой отличается от моделей управления других общин Республики Армения. Структура местного самоуправления в столице регулируется отдельно в рамках Закона РА «О местном самоуправлении в городе Ереване», который не только устанавливает виды и полномочия органов власти, но и определяет их взаимодействие между населением общины, советом старейшин, муниципалитетом и государственными органами. Особенность системы местного самоуправления Еревана заключается в том, что она сочетает в себе как политические, так и административные элементы и имеет многоуровневую структуру, включающую совет старейшин, мэра, муниципалитет и глав административных районов.

Всесторонне исследовав структуру органов местного самоуправления Еревана, раскрыв их правовые основы, логику распределения функций, взаимозависимость и другие вопросы, автор пришел к выводу, что система местного самоуправления Еревана в настоящее время находится в сложном положении баланса между институциональной стабильностью и демократией. Для преодоления этого необходимо пересмотреть функции совета, мэра и административных подразделений, усилить взаимный контроль и выделить больше места для участия общественности.

Հիմնաբառեր՝ Երևանի քաղաքապետարան, ավագանի, վարչական շրջան, տեղական ինքնակառավարման կառուցվածք, հանրային ներգրավվածություն:

Key words: Yerevan’s Municipality, Council of elders, administrative district, local government structure, public engagement.

Ключевые слова: мэрия Еревана, Совет старейшин, административный район, структура местного самоуправления, вовлечение общественности.

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԼԻԴԱ
Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ մասնագետ

MIKAELYAN LIDA
Senior specialist of legal support division of legal department of the office of the President of the Republic of Armenia

МИКАЕЛЯН ЛИДА
Старший специалист отдела правового обеспечения юридического управления аппарата президента Республики Армения

ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ՀԱՍԱԾ ԱՆՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ*

THE BASIC ISSUES FOR TERMINATING CITIZENSHIP OF THE REPUBLIC OF ARMENIA OF A PERSON WHO HAS REACHED THE AGE OF MILITARY*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ПРЕКРАЩЕНИЯ ГРАЖДАНСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ЛИЦА, ДОСТИГШЕГО ВОЗРАСТА ВОИНСКОЙ ОБЯЗАННОСТИ*

Ամփոփագիր

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը քաղաքացու կողմից քաղաքացիությունը դադարեցնելու երկու ընթացակարգ է նախատեսում, որոնցից մեկը քաղաքացիության դադարումը կապում է ծնողների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու դեպքերի հետ, իսկ մյուսը՝ կարգավորում է ՀՀ քաղաքացիության փոփոխման (դադարման) առավել լայն իրավահարաբերություններ, տվյալ հոդվածով քննարկման առարկա է դառնում զինապարտության տարիքի հասած անձի ՀՀ քաղաքացիության դադարմանը վերաբերող իրավահարաբերությունները, դատահիրավական և միջազգային-իրավական պրակտիկան:

Ինչպես ներպետական այնպես էլ միջազգային-իրավական պրակտիկան ընթացել է այն ուղղվածությամբ, որ բացի քաղաքացիությունը դադարեցնելու որոշ հիմքերի պարտադիր առկայության, էական հանգամանք է նաև անձի կողմից պետության առջև պարտավորության բացակայությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ եկել ենք այն եզրահանգման, որ ՀՀ քաղաքացի հանդիսացող, արական սեռի յուրաքանչյուր անձի ում 16 տարի լրանալու է տվյալ տարվա՝ այսինքն X տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31 ընկած որևէ ժամանակահատվածում, չի կարող դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից քանի, որ տվյալ տարում նա արդեն իսկ համարվում է, օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական հաշվառման ենթակա անձ (իրավահարաբերության սուբյեկտ), իսկ վերջինիս ակտիվ գործողությունները, այն է՝ կանգնել զինվորական հաշվառման, պետք է իրականացվի 16 տարեկանը լրանալուց հետո («Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածներ):

Annotation

The Law of the Republic of Armenia "On Citizenship" establishes two procedures by which a citizen may terminate his Armenian citizenship. One links the termination of citizenship to cases where the parents lose citizenship of the Republic of Armenia, while the other regulates broader legal relations concerning the change (termination) of Armenian citizenship.

This article discusses the legal relations related to the termination of Armenian citizenship by a person who has reached the age of military service, as well as relevant judicial and international legal practice.

Both domestic and international legal practice have been developed in such a way that, in addition to the mandatory existence of certain grounds for the termination of citizenship, also an essential circumstance is the absence of any obligations of the person towards the state. Taking into account the above mentioned, we have concluded that any male citizen of the Republic of Armenia who turns 16 in a given year that is, at any time between January 1 and December 31 of year X cannot renounce his Armenian citizenship, since in that year he is already considered a person subject to military registration (a subject of legal relations) in accordance with the procedure established by law. Active actions related to military registration, namely, registering for military service, must be carried out after reaching the age of 16 (Articles 21 and 22 of the Law "On Defense").

Аннотация

Закон РА «О гражданстве» предусматривает два порядка прекращения гражданства гражданином Республики Армения: один из них связывает прекращение гражданства со случаями утраты гражданства Республики Армения родителями, а другой регулирует более широкий круг правоотношений, связанных с изменением (прекращением) гражданства. В настоящей статье рассматриваются правоотношения, а также судебная и международно-правовая практика, касающиеся прекращения гражданства Республики Армения лицом, достигшим призывного возраста. Как отечественная, так и международная правовая практика развивались в направлении признания того, что, помимо обязательного наличия определённых оснований для прекращения гражданства, существенным обстоятельством является также отсутствие у лица обязательств перед государством.

Учитывая изложенное, мы пришли к выводу, что гражданин мужского пола, являющийся гражданином Республики Армения и которому в данном году, то есть в любой период с 1 января по 31 декабря года X, исполняется 16 лет, не может выйти из гражданства Республики Армения, поскольку в этом году он уже считается лицом, подлежащим воинскому учёту (субъектом правоотношений) в порядке, установленном законодательством. Активные действия, а именно постановка на воинский учёт, должны быть осуществлены после достижения им 16-летнего возраста (статьи 21 и 22 Закона «Об обороне»).

Հիմնաբառեր՝ քաղաքացիություն, քաղաքացիությունը դադարեցնել, 16 տարին լրացած անձ:

Key words: citizenship, termination of citizenship, person over 16 years of age.

Ключевые слова: гражданство; прекращение гражданства; лицо, достигшее 16-летия.

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО

ԱԶԻԶՅԱՆ ԶԱՐԻՆԵ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
իրավաբանական վարչության ղեկավար

AZIZYAN ZARINE
Head of the Legal Department
of OJSC «AKBA BANK»

АЗИЗЯН ЗАРИНЕ
Руководитель юридического департамента
ОАО «АКБА БАНК»

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
Ի.գ.թ., Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս

GEVORGIAN GARIK
PhD in law, Lecturer at the Chair of Civil Law and Civil Procedure Law of the Institute of Law of the Russian-Armenian University

ГЕВОРГЯН ГАРИК
К.ю.н., преподаватель кафедры гражданского права и гражданского процессуального права Института права Российско-Армянского университета

ԳՐԱՎԻ ՃԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

THE PRINCIPLE OF FLEXIBILITY OF PLEDGE IN THE REPUBLIC OF ARMENIA*

ПРИНЦИП ЭЛАСТИЧНОСТИ ЗАЛОГА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Այս ուսումնասիրության շարժառիթը հանդիսացել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանների կողմից ձևավորված դատական պրակտիկան, որի համաձայն դատարանները հանգում են այն եզրակացության, որ գրավով ծանրաբեռնված կոոպերատիվին պատկանող անշարժ գույքի նկատմամբ գրավը դադարում է, երբ կոոպերատիվի անդամները ամբողջությամբ վճարում են իրենց փայավճարները և ձեռք են բերում սեփականության իրավունք՝ գույքը ստանալով առանց այլ իրավունքներով ծանրաբեռնված վիճակում: Նման դիրքորոշումը խնդիրներ է առաջացնում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գրավի դադարման համար նման հիմք չի նախատեսում (ֆորմալ տեսանկյունից գրավի դադարումը դատարանների կողմից հիմնավորվել է դրա ոչնչացմամբ, քանի որ բազմաբնակարան շենքը բաժանվել է առանձին միավորների՝ բնակարանների): Ավելին, կասկածելի է դատարանների եզրահանգումը, թե գույքի փոխանցումից հետո գրավը պետք է տարածվի կոոպերատիվի անդամի վճարած փայավճարների վրա, քանի որ օրենսդրորեն նման մեխանիզմներ չկան: Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել գրավի իրավունքին հետևելու և գրավի ճկունության սկզբունքները՝ հասկանալու, թե որ սկզբունքն է կիրառելի նման դեպքերում: Հատկապես կարևորվում է նաև այն հարցը, թե որ դատարաններն են իրավասու քննել այս հարցերը, քանի որ անվիճելի է, որ գրավի առարկայի ձևափոխման դեպքում գրավի իրավունքի պահպանման կամ դադարման հարցերը մասնավոր իրավունքին են վերաբերում:

Annotation

The motive for writing this article was the case law of administrative courts concerning the resolution of cases in which courts conclude that the pledge over the property (an apartment building) of a cooperative is terminated after the members of the cooperative fully pay their contributions and gain ownership over the apartment. Such a position appears prima facie problematic, primarily because the Civil Code of the Republic of Armenia does not provide for such a basis for the termination of a pledge. Additionally, the higher courts' conclusions that after the transfer of the property to the cooperative member, the pledge should apply to the funds paid by the member to the cooperative are highly questionable. Again, the legal basis for such a conclusion is absent in the Civil Code. Therefore, it is necessary to clarify which principle the case law has followed and which principle should be applied in such cases given the current legal regulation: the principle of pledge flexibility (considering its applicability in this case) or the principle of the pledge's following the ownership right. A related key point is the appropriate jurisdiction for disputes on these matters, as the case law in question has developed within administrative proceedings, even though the private law nature of the issues related to the continuation or termination of the pledge upon transfer of ownership is clear.

Аннотация

Поводом написания данной статьи стала судебная практика административных судов относительно разрешения дел, в рамках которого суды приходят к выводу о прекращении залога, которым обременено имущество (многоквартирный дом) кооператива, после того, как члены кооператива выплачивают полностью свои взносы и им переходит право собственности на квартиру в многоквартирном доме. Подобная позиция *prima facie* проблематична лишь из-за того, что Гражданский кодекс РА не предусматривает такого основания прекращения залога (в качестве правового основания прекращения залога суды отметили, что залог прекращается в связи с уничтожением предмета залога, так как после разделения многоквартирного дома на отдельные единицы – квартиры, первоначальный объект уничтожается), кроме того весьма сомнительны представляются выводы вышестоящих судов о том, что после передачи вещи члену кооператива залог должен распространяться на те денежные средства, которые последний выплатил кооперативу. Опять же, правовые основания подобного вывода отсутствуют в Гражданском кодексе. Поэтому следует разобраться, какому принципу последовала судебная практика и какой принцип должен действовать в таких случаях с учетом действующего правового регулирования: принцип эластичности залога (рассмотрев вопрос его применимости в этом случае) или принцип следования залога за правом собственности. Фундаментальным является также вопрос подведомственности споров относительно изложенных вопросов, так как изученная нами практика судов сформировалась в рамках административного судопроизводства, в то время как частно-правовой характер вопросов сохранения или прекращения права залога при передаче права собственности является бесспорным.

Հիմնաբառեր՝ գրավ, բազմաբնակարան շենք, կոոպերատիվ, գրավի դադարում, գույքի բաժանում, սեփականության իրավունքի փոխանցում:

Key words: Pledge, apartment building, cooperative, termination of pledge, division of property, ownership transfer.

Ключевые слова: залог, многоквартирный дом, кооператив, прекращение залога, разделение вещи, передача права собственности.

ԴԱՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ / JUDICIAL LAW / СУДЕБНОЕ ПРАВО

ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ
ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի օգնական, Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս

KHUNDKARYAN HENRIK
Assistant to Judge of the Administrative Chamber of the Court of Cassation of the Republic of Armenia, Lecturer at the Chair of Civil Procedure of the Yerevan State University

ХУНДКАРЯН ГЕНРИК
Помощник судьи Административной палаты Кассационного суда Республики Армения, преподаватель кафедры гражданского процесса Ереванского государственного университета

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

CHARACTERISTICS OF THE RIGHT TO JUDICIAL PROTECTION OF THE DISPUTES RELATED TO THE SUBMISSION OF A JUDGE TO DISCIPLINARY RESPONSIBILITY AND THE TERMINATION OF A JUDGE'S AUTHORITIES*

ОСОБЕННОСТИ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА СУДЕБНУЮ ЗАЩИТУ ПО СПОРАМ, СВЯЗАННЫМ С ПРИВЛЕЧЕНИЕМ СУДЬИ К ДИСЦИПЛИНАРНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ И ПРЕКРАЩЕНИЕМ ЕГО ПОЛНОМОЧИЙ*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Դատավորի պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման կարևորությունն առանձնանում է ոչ միայն դատավորի աշխատանքային իրավունքների իրավական պաշտպանվածության ապահովման անհրաժեշտությամբ, այլև՝ դատավորի անկախության ապահովման անհրաժեշտությամբ:

Վերոնշյալով պայմանավորված՝ մի շարք միջազգային կառույցներ անդրադարձել են տվյալ հարցին՝ առանձնացնելով դատավորի կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման հետ կապված դատական խորհուրդների որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորության նախատեսման կարևորությունը:

Սույն հետազոտությունը նվիրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո դատավորի «աշխատանքային իրավունքների», մասնավորապես՝ վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու համատեքստում դատական պաշտպանության հիմնախնդիրներին:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները դադարեցնելու հետ կապված Բարձրագույն դատական խորհրդի որոշումները ենթակա չեն դատական կարգով բողոքարկման ի հակադրություն միջազգային մի շարք փաստաթղթերի (օրինակ՝ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի կարծիքների,

Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականների):

Սույն հետազոտության շրջանակներում եկել ենք այն եզրահանգման, որ Բարձրագույն դատական խորհուրդն ապահովում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները, ինչի արդյունքում անհրաժեշտ չէ նախատեսել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն:

ANNOTATION

The importance of improving the institution of the liability of the judges is distinguished not only by the need to ensure legal protection of a judge's "labor rights", but also by the need to ensure the independence of a judge.

In light of the above, a number of international organizations have addressed this issue, highlighting the importance of providing for the possibility of judicial appeal of decisions of judicial councils related to the disciplinary liability and termination of powers of a judge.

This study is devoted to the issues of judicial protection of a judge's labor rights, in particular, in the context of subjecting the latter to disciplinary liability and termination of powers, in the light of the positions of the European Court of Human Rights.

The relevance of the topic is justified by the fact that in the Republic of Armenia, decisions of the Supreme Judicial Council related to subjecting a judge to disciplinary liability and termination of powers are not subject to judicial appeal, in contrast to a number of international documents (for example, opinions of the European Commission on Democracy through Law, Kiev Recommendations on Judicial Independence in Eastern Europe, the South Caucasus and Central Asia, Recommendations of the Committee of Ministers of the Council of Europe).

Within the framework of this research, we conclude that the Supreme Judicial Council ensures the guarantees provided for in the Article 6 of the European Convention, as a result of which it is not necessary to provide for the possibility of judicial appeal of decisions adopted by the Supreme Judicial Council on subjecting a judge to disciplinary liability or terminating the powers of a judge.

АННОТАЦИЯ

Важность совершенствования института ответственности судей определяется не только необходимостью обеспечения правовой защиты «трудовых прав» судьи, но и необходимостью обеспечения независимости судьи.

В связи с вышеизложенным ряд международных организаций обратились к данной проблеме, подчеркнув важность предоставления возможности судебного обжалования решений судебных советов, связанных с привлечением к дисциплинарной ответственности и прекращением полномочий судьи.

Настоящее исследование посвящено вопросам судебной защиты трудовых прав судьи, в частности, в контексте привлечения его к дисциплинарной ответственности и прекращения его полномочий, в свете позиций Европейского суда по правам человека.

Актуальность темы обосновывается тем, что в Республике Армения решения Высшего судебного совета о привлечении к дисциплинарной ответственности и прекращении полномочий судьи не подлежат судебному обжалованию, в отличие от ряда международных документов (например, заключений Европейской комиссии за демократию через право, Киевских рекомендации о независимости судебной власти в странах Восточной Европы, Южного Кавказа и Центральной Азии, рекомендации Комитета министров Совета Европы).

В рамках данного исследования автор приходит к выводу, что Высший Судебный Совет обеспечивает гарантии, предусмотренные статьей 6 Европейской конвенции, вследствие чего не требуется предусматривать возможность судебного обжалования решений, принятых Высшим Судебным Советом о привлечении судьи к дисциплинарной ответственности или о прекращении полномочий судьи.

Հիմնաբառեր՝ դատավորի կարգապահական պատասխանատվություն, դատավորի լիազորությունների դադարեցում, դատական կարգով բողոքարկում, վերանայում, Բարձրագույն դատական խորհուրդ, դատարան, բացարձակ անձեռնմխելիություն:

Keywords: disciplinary liability of a judge, termination of a judge's powers, judicial appeal, review, Supreme Judicial Council, court, absolute immunity.

Ключевые слова: дисциплинарная ответственность судьи, прекращение полномочий судьи, судебное обжалование, пересмотр, Высший Судебный Совет, суд, абсолютный иммунитет.

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

NALBANDYAN ANAHIT
PhD Student at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia

НАЛБАНДЯН АНАИТ
Соискатель института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения

ԴԱՏԱԿԱՆ ՆՈՐՄԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ*

ON THE CONCEPT OF JUDICIAL RULE-MAKING*

О КОНЦЕПЦИИ СУДЕБНОГО НОРМОТВОРЧЕСТВА*

Ամփոփագիր

Հոդվածում հանգամանորեն վերլուծվել են դատական նորմաստեղծության և դատական հայեցողության հետ կապված հարցերը: Քննարկվել են նաև դատական նորմաստեղծության վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ՝ ա) դատավորները ստեղծում են իրավունք, (դատական իրավունք), բ) դատավորներն իրավունք ստեղծող չեն, այլ «իրավունքի հռչակողներն են»: Նշվել է, որ անգլոամերիկյան իրավական համակարգում այս մոտեցումները, հայեցակարգերը գոյություն ունեն ոչ միայն տեսական հարթության վրա, այլև դատական պրակտիկայում: Նախադեպային իրավունքի հետազոտողները առանձնացնում են դատական նորմաստեղծ գործունեության հետևյալ հատկանիշները. դատական հայեցողության ինքնասահմանափակում, դատական իմաստություն և ճկունություն, դատական ստեղծագործություն, որոնց համակցությամբ դատարանը (դատավորը) ստեղծում է նոր իրավունք կամ մեկնում է ստատուտի (օրենքի) նոր բովանդակություն:

Արդի ժամանակաշրջանում դատական նորմաստեղծ գործունեության հայեցակարգը լայն տարածում է ստացել ընդհանուր (նախադեպային) իրավունքի երկրների իրավական համակարգերում և դատական պրակտիկայում: Գիտական հոդվածում քննարկվում է այն մոտեցումը, որով դատական հայեցողությունը պարունակում է որոշակի սուբյեկտիվիզմի դրսևորում, որը կարող է հանգեցնել նաև իրավաբանական սխալի: Նման իրավակիրառ ռիսկը բացառելու կամ նվազագույնի հասցնելու համար պահանջվում է իրավակիրառողի (դատավորի) պատասխանատու անաչառ, կամայականության բացառում, հիմնավորված և հավասարակշռված մոտեցում:

Հոդվածում վերլուծության է ենթարկվել նաև այն փաստը, որ դատական նորմաստեղծ գործունեությունը և դատական հայեցողությունը՝ որպես հարակից զույգ իրավական կատեգորիաներ, պետք է համահունչ լինեն գործող իրավական համակարգի տրամաբանության, իրավակիրառ պրակտիկայի և դատական քաղաքականության հետ:

Annotation

In this article, the author has thoroughly discussed the issues related to judicial rule-making and judicial discretion. The article also discusses two main approaches to judicial rule-making a) judges create law, (judicial law), b) judges are not law creators, but "proclaimers of law". In the Anglo-American legal system, these approaches and concepts exist not only on a theoretical level, but also in judicial practice. Case law researchers distinguish the following features of judicial norm-making activity: self-limitation of judicial discretion, judicial wisdom and flexibility, judicial creativity, with the combination of which the court (judge) creates a new right or interprets a new content of the statute (law). In modern times, the concept of judicial norm-making activity has become widespread in the legal systems and judicial practice of common (case law) countries.

The scientific article discusses the approach by which judicial discretion contains a certain manifestation of subjectivism, which can also lead to legal error. In order to exclude or minimize such a risk of law enforcement, a responsible impartiality, exclusion of arbitrariness, a reasoned and balanced approach of the law enforcement officer (judge) is required.

The article analyzes the fact that judicial norm-making activity and judicial discretion, as a pair of related legal categories, must be consistent with the logic of the current legal system, law enforcement practice and judicial policy.

Аннотация

В статье подробно рассмотрены вопросы, связанные с судебным нормотворчеством и судебным усмотрением. Рассмотрены также два основных подхода к судебному нормотворчеству: а) судьи создают право (судебное право), б) судьи не правотворцы, а «провозглашатели права». В англо-американской правовой системе данные подходы и концепции существуют не только на теоретическом уровне, но и в судебной практике. Исследователи судебной практики выделяют следующие особенности судебной нормотворческой деятельности: самоограничение судебного усмотрения, судебная мудрость и гибкость, судебное творчество, при сочетании которых суд (судья) создает новый закон или объясняет новое содержание закона.

В настоящее время понятие судебной нормотворческой деятельности получило широкое распространение в правовых системах и судебной практике стран общего (прецедентного) права. В научной статье рассматривается подход, при котором судебное усмотрение содержит в себе определенное проявление субъективизма, что также может привести к юридической ошибке. Для того чтобы исключить или минимизировать такой риск правоприменения, требуется ответственная беспристрастность, исключение произвола, обоснованный и взвешенный подход правоприменителя (судьи).

В статье анализируется также факт, что судебная нормотворческая деятельность и судебное усмотрение, как пара взаимосвязанных правовых категорий, должны соответствовать логике существующей правовой системы, правоприменительной практики и судебной политики.

Հիմնաբառեր՝ դատավոր, դատական պրակտիկա, իրավունքի հռչակողներ, նորմաստեղծ գործունեություն, դատական նախադեպ, դատական հայեցողություն:

Key words: judge, judicial practice, proclaimers of law, rule-making activity, judicial precedent, judicial discretion.

Ключевые слова: судья, судебная практика, провозглашатели права, нормотворческая деятельность, судебный прецедент, судебное усмотрение.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА

ԱԴՈՆՑ ԳՈՀԱՐ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության և վերահսկողության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, Հայաստանի Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, Ռուս-Հայկական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ

ADONTS GOHAR
Senior Investigator for EIC of the Internal Security and Oversight Department of the Anti-Corruption Committee of the Republic of Armenia, Lecturer at the Faculty of Law of the European University of Armenia, PhD Applicant of the Department of Criminal Law and Criminal Procedure of the Russian-Armenian University

АДОНЦ ГОАР
Старший следователь по ОВД управления внутренней безопасности и контроля Антикоррупционного комитета РА, преподаватель юридического факультета Европейского университета Армении, соискатель кафедры уголовного права и уголовного процесса Российско-Армянского университета

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ*

SOME ISSUES OF UNDERSTANDING THE PRINCIPLE OF PRESUMPTION OF INNOCENCE IN CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПОНИМАНИЯ ПРИНЦИПА ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկածի սկզբունքի հասկացության որոշակի խնդիրներին: Այդ առումով ուսումնասիրվել են անմեղության կանխավարկածին առնչվող միջազգային կարգավորումները, ներպետական իրավունքում դրա հասկացությունը, ինչպես նաև հարաբերակցությունը ոչ արդարացնող հիմքերի հետ:

Ներկայացվել են նաև անմեղության կանխավարկածի սկզբունքի և քրեական հետապնդում դադարեցնելու ինստիտուտների վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց համատեքստում քննարկվել է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում դադարեցնելու դեպքում անմեղության կանխավարկածի հաղթահարման հնարավորությունները: Բացի դրանից, ներկայացվել են տարբեր գիտնականների դիրքորոշումներ վերոգրյալ հարցի կապակցությամբ, ինչպես նաև նոր քրեադատավարական կարգավորումների համատեքստում դրանց վերաբերյալ հեղինակի կողից կատարված եզրահանգումները: Միաժամանակ, դիրքորոշումներ են ներկայացվել ոչ արդարացնող հիքմով քրեական հետապնդում դադարեցնելու և անմեղության կանխավարկածի ինստիտուտների հարաբերակցության, առաջացող խնդիրների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, առաջարկվել են առաջացող խնդրիների հնարավոր լուծումներ: Մասնավորապես՝ առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեադատավարական օրենսդրության մեջ՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի ձևակերպումները համապատասխանեցնելով միջազգային փաստաթղթերում տրվածներին, և ներպետական օրենսդրությամբ սահմանել անմեղության կանխավարկածի հաղթահարման հնարավորություն նաև ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու դեպքերում:

Annotation

This article dedicated to some issues related to the concept of the presumption of innocence. It states international normative acts pertaining to the presumption of innocence, its concept in national legislation, and its relationship to the institute of terminating criminal prosecution on the grounds of non-justifying circumstances.

The article presents the legal positions of the European Court of Human Rights, the Constitutional Court of the Republic of Armenia, and the Cassation Court of the Republic of Armenia regarding the principle of the presumption of innocence and the mechanisms for terminating criminal prosecution. In this context, it discusses the possibilities of overcoming the presumption of innocence when terminating criminal prosecution on the grounds of non-justifying circumstances. The article also presents the positions of various scholars on this issue, as well as the author's conclusions regarding them in the context of new criminal procedural norms. The article presents the author's positions regarding the relationship between the mechanisms for terminating criminal prosecution on the grounds of non-justifying circumstances and the presumption of innocence, as well as the problems arising in this regard.

The article also proposes possible solutions to the emerging problems, in particular, making appropriate amendments to the Constitution of the Republic of Armenia and the Criminal Procedure Code of the Republic of Armenia, bringing the formulation of the principle of the presumption of innocence into line with the formulation given in international documents, and in domestic legislation to formulate the possibility of overcoming the presumption of innocence also in cases of termination of criminal prosecution due to non-justifying circumstances.

Аннотация

Статья посвящена некоторым проблемам понимания принципа презумпции невиновности. В этой связи рассмотрены международные нормативные акты, касающиеся презумпции невиновности, а также её концепция в национальном законодательстве и соотношение с основаниями прекращения уголовного преследования по не реабилитационным обстоятельствам.

Представлены также правовые позиции Европейского суда по правам человека, Конституционного суда Республики Армения и Кассационного суда Республики Армения относительно принципа презумпции невиновности и институтов прекращения уголовного преследования, и в их контексте рассматриваются возможности преодоления презумпции невиновности при прекращении уголовного преследования по не реабилитационным обстоятельствам. В статье также представлены позиции различных учёных по данному вопросу, а также выводы о них, сделанные автором в контексте новых уголовно-процессуальных норм. В статье представлены позиции автора относительно соотношения институтов прекращения уголовного преследования по не реабилитационным обстоятельствам и презумпции невиновности, а также возникающие в связи с этим проблемы.

В статье также предложены возможные пути решения возникающих проблем, в частности, предложено внести соответствующие изменения в Конституцию РА и Уголовно-процессуальный кодекс РА, приведя формулировку принципа презумпции невиновности в соответствие с формулировкой, данной в международных документах, а в отечественном законодательстве сформулировать возможность преодоления презумпции невиновности также и в случаях прекращения уголовного преследования по не реабилитационным обстоятельствам.

Հիմնաբառեր՝ անմեղության կանխավարկածի սկզբունք, ոչ արդարացնող հիմք, արդարացնող հիմք, քրեական հետապնդման դադարեցում:

Key words: the principle of presumption of innocence, non-justifying circumstances, justifying circumstances, termination of criminal prosecution.

Ключевые слова: принцип презумпции невиновности, нереабилитирующие основания, реабилитирующие основания, прекращение уголовного преследования.

ԵՆԳԻԲԱՐՅԱՆ ՎԱՀԵ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավար

YENGIBARYAN VAHE
Doctor Legal Sciences, Professor at the Chair of Criminal Procedure and Criminalistics of the Faculty of Law of the Yerevan State University, Honored Lawyer of the RA, Head of the Staff of the Director of the National Security Service of the RA

ЕНГИБАРЯН ВАГЕ
Профессор кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета Ереванского государственного университета, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА, руководитель аппарата директора Национальной службы безопасности РА

ՀԱՐՈՅԱՆ ՀԱՅԿՈՒՇ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական

HAROYAN HAYKUSH
PhD Candidate at the Chair of Criminal Procedure and Criminalistics of the Faculty of Law of the Yerevan State University, Judicial Assistant of the Anti-Corruption Court of the Republic of Armenia

АРОЯН АЙКУШ
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета Ереванского государственного университета, помощник судьи Антикоррупционного суда РА

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

PROBLEMS OF APPLYING PLEA BARGAINING AS A SPECIAL PROCEDURE OF TRIAL IN THE CRIMINAL PROCEEDINGS OF THE REPUBLIC OF ARMENIA*

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕДУРЫ СОГЛАШЕНИЯ КАК ОСОБОГО ПОРЯДКА СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման առանձնահատկությունները կարգավորող իրավական նորմերի հետ կապված մի շարք արդի հիմնահարցեր: Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում վեր են հանվում, հետազոտվում և վերլուծվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 461–րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման պայմաններում համաձայնության մասին արձանագրությունը վերադարձնելու կամ այն չընդունելու դեպքում դատարանի իրավասությունները, ինչպես նաև 463-րդ հոդվածով

սահմանված՝ դատավճիռ կայացնելիս դրան ներկայացվող բովանդակային պահանջների հիմնախնդիրները, մասնավորապես՝ այդպիսի դատավճռի պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը:

Այս առումով հոդվածն արդիական է, քանզի դրանում քննարկված հիմնախնդիրները, դրանց արդյունքում արված եզրակացությունները և առաջարկությունները կարող են տեսական աղբյուր հանդիսանալ «Համաձայնեցման վարույթ» ինստիտուտի վերաբերյալ, ինչպես նաև գործնական նշանակություն ունենալ նշված ինստիտուտի կատարելագործման համար՝ օրենսդրական նախաձեռնության տեսանկյունից:

Հոդվածում քննարկվում են այնպիսի արդի հիմնահարցեր, ինչպիսիք են համաձայնեցման վարույթով համաձայնության մասին արձանագրությունը վերադարձվելու, ինչպես նաև այն չընդունելու դեպքում առկա պրակտիկ խնդիրները, համաձայնեցման վարույթով կայացվող դատավճռի պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը:

Annotation

The purpose of the article is to analyze a number of issues related to the legal norms governing the special procedure of trial in the form of a plea bargaining process as prescribed by the Criminal Procedure Code of the Republic of Armenia. The practical significance of the study lies in the fact that it reveals and examines the court's powers in cases where the plea agreement protocol, provided under Part 3 of Article 461 of the Criminal Procedure Code, is either returned or not accepted by the court, as well as the substantive requirements set forth in Article 463 that must be met when rendering a judgment, in particular the reasoning and justification of such a judgment.

In this regard, the article is relevant since the conclusions and recommendations presented may serve as a theoretical source concerning the institution of.

Besides, the issues discussed, the conclusions drawn, and the recommendations may serve as a theoretical foundation for the "Plea bargaining" institution, as well as have practical significance for improving this institution from a legislative initiative perspective.

The article addresses current problems such as the return of the agreement in the negotiated settlement procedure, issues arising when it is not accepted, as well as the reasoning and justification of the judgment rendered in the negotiated settlement procedure.

Аннотация

Цель статьи заключается в анализе ряда вопросов, связанных с правовыми нормами, регулирующими особенности применения особого порядка судебного разбирательства в форме процедуры соглашения, предусмотренной Уголовно-процессуальным кодексом Республики Армения. Практическая значимость работы состоит в том, что в ней выявляются и исследуются полномочия суда в случаях, когда протокол соглашения, предусмотренный частью 3 статьи 461 УПК РА, возвращается или не принимается судом при применении процедуры соглашения в качестве особого порядка судебного разбирательства, а также проблемы, связанные с содержательными требованиями к приговору, закреплёнными в статье 463, в частности – с его мотивированностью и обоснованностью.

В этом контексте статья актуальна, поскольку поднятые в ней вопросы, сделанные выводы и рекомендации могут стать теоретической основой для дальнейшего развития института «Согласованного производства», а также иметь практическое значение для совершенствования этого института с точки зрения законодательной инициативы.

В статье обсуждаются такие актуальные проблемы, как возврат соглашения по результатам согласованного производства и проблемы, возникающие при его несогласии, обоснованность и аргументация приговора, вынесенного в рамках согласованного производства.

Հիմնաբառեր՝ դատաքննության հատուկ կարգ, համաձայնեցման վարույթ, լրացուցիչ դատաքննություններ, համաձայնության մասին արձանագրություն, պատժի համաձայնեցում, բռնագրավման ենթակա գույքի կամ դրա չափի համաձայնեցում:

Key words: special procedure of trial, plea bargaining, additional hearings, agreement protocol, agreement on punishment, agreement on confiscation of property or its amount.

Ключевые слова: особый порядок судебного разбирательства, процедура соглашения, дополнительные судебные слушания, протокол соглашения, согласование наказания, согласование конфискации имущества или его размера.

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

GHAMBARYAN ARTUR
Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University, Doctor of Legal Sciences, Professor, Professor of the State Administration Academy, Honored Lawyer of the RA

ГАМБАРЯН АРТУР
Доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления Республики Армения, заслуженный юрист РА

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ISSUES OF CONSTITUTIONALITY IN DEPRIVATION OF PROPERTY IN THE CRIMINAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARMENIA*

ВОПРОСЫ КОНСТИТУЦИОННОСТИ ЛИШЕНИЯ СОБСТВЕННОСТИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում է քրեական դատավարությունում առանց դատարանի որոշման, քննիչի կամ դատախազի ակտերի հիման վրա անձի սեփականությունը համարվող գույքը պետության եկամուտը դարձնելու կամ այլ կերպ հարկադրաբար օտարելու կարգավորումների սահմանադրականությունը: Հեղինակը կարծում է, որ նման իրավիճակներ ծագում են երկու դեպքում՝ 1) քննիչի որոշմամբ վարույթը կարճելիս մեղադրյալին պատկանող՝ դիտավորությամբ կատարված հանցանքի գործիքների, որոնք ճանաչվել են որպես իրեղեն ապացույց, բռնագրավելու կամ իրավասու հաստատությանը հանձնելու կամ ոչնչացնելու դեպքում, 2) որպես խափանման միջոց կիրառված գրավի պայմանները խախտելու դեպքում գրավի առարկան (այսուհետ՝ գրավը) հսկող դատախազի որոշմամբ պետության եկամուտ դարձնելու դեպքում: Գրավը դատախազի որոշմամբ պետականացնելու վերաբերյալ կարգավորում նախատեսելիս օրենսդիրը թույլ է տվել սահմանադրաիրավական դելիկտ:

Այս իրավիճակների սահմանադրականությունը որոշելու համար հեղինակը վերլուծում է ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը սահմանափակելու, մասնավորապես՝ սեփականությունից զրկելու վերաբերյալ սահմանադրաիրավական կարգավորումները և դրանց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումները: Դատախազի որոշմամբ գրավը պետության եկամուտ դարձնելու կարգավորման սահմանադրականությունը որոշելու համար հոդվածում մանրամասն քննարկվում են քաղաքացիական և վարչական իրավունքներում արտադատական կարգով գույքի բռնագանձման հարցերը և զուգահեռներ են տարվում ՀՀ քրեադատավարական կարգավորումների հետ:

Annotation

This article examines the constitutionality of regulations permitting the compulsory alienation of property recognized as belonging to an individual into state revenue in criminal proceedings without a court decision – based on acts by an investigator or prosecutor. The author believes that such situations arise in two contexts.

1) Upon termination of proceedings by an investigator's decision – involving confiscation, transfer to a competent authority, or destruction of instruments of intentionally committed crime owned by the accused and recognized as material evidence;

2) The legislator has allowed a constitutional-legal delict when providing a regulation for converting bail into state revenue by the decision of the prosecutor.

To determine the constitutionality of these scenarios, the author analyzes constitutional-legal regulations on restricting the right to property guaranteed under Article 60 of the RA Constitution, particularly deprivation of property, and the positions of the RA Constitutional Court thereon. To assess the constitutionality of converting pledge into state revenue by prosecutor's decision, the article discusses in detail issues of extrajudicial forcible collection of property in civil and administrative law, drawing parallels with RA criminal procedural regulations.

Аннотация

В настоящей статье рассматривается конституционность регулирования принудительного обращения в доход государства имущества, признаваемого собственностью лица, в уголовном процессе без судебного решения – на основании актов следователя или прокурора. Автор считает, что такие ситуации возникают в двух контекстах:

1) При прекращении производства постановлением следователя – при конфискации или передаче компетентному учреждению либо уничтожении орудий умышленно совершенного преступления, принадлежащих обвиняемому и признанных вещественными доказательствами;

2) Законодатель допустил конституционно-правовой деликт при разработке регулирования по вопросу об изъятии залога в государственную собственность по решению прокурора.

Для определения конституционности указанных ситуаций автор анализирует конституционно-правовое регулирование ограничения права собственности, гарантированного статьей 60 Конституции РА, в частности – лишения собственности, а также позиции Конституционного суда РА по данным вопросам. Для оценки конституционности регулирования обращения залога в доход государства по решению прокурора в статье детально обсуждаются вопросы внесудебного принудительного обращения имущества в гражданском и административном праве, проводятся параллели с уголовно-процессуальными нормами РА.

Հիմնաբառեր՝ սեփականություն, գրավ, խափանման միջոց, բռնագանձում, իրավունքից հրաժարվել, իրեղեն ապացույցը տնօրինել:

Key words: property, bail, preventive measure, forcible collection, waiver of right, disposition of material evidence.

Ключевые слова: собственность, залог, мера пресечения, принудительное взыскание, отказ от права, распоряжение вещественными доказательствами.

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՍԵՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

MARTIROSYAN ARSEN
Candidate of Legal Sciences, Associate Professor

МАРТИРОСЯН АРСЕН
Кандидат юридических наук, доцент

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՑՑ ՀԱՐՑԵՐ*

SOME PROBLEMATIC ISSUES RELATED TO THE LEGAL REGULATION OF SECRET INVESTIGATIVE ACTIONS PROVIDED BY THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA*

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМНЫЕ ВОПРОСЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СЕКРЕТНЫХ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ, ПРЕДУСМОТРЕННЫХ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫМ КОДЕКСОМ РА*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գաղտնի քննչական գործողությունների իրավական կարգավորմանը վերաբերող առանձին խնդրահարույց հարցերի վերլուծությանը:

Հոդվածում հեղինակի կողմից քննարկման առարկա է դարձվում առանց տեխնիկական միջոցների՝ անմիջականորեն, վիզուալ իրականացված ներքին դիտում գաղտնի քննչական գործողության արդյունքների՝ որպես ապացույցի օգտագործման թույլատրելիության հնարավորության հարցը, որի կապակցությամբ հեղինակը առաջարկում է կամ օրենսդրորեն բացառել նշված եղանակով ներքին դիտում գաղտնի քննչական գործողության կատարման դատավարական հնարավորությունը կամ նախատեսել քրեական վարույթի ընթացքում՝ դրանց որպես ապացույցի օգտագործման անհնարինության հանգամանքը՝ հաշվի առնելով, որ այդ եղանակով տեղեկությունները հնարավոր չէ գնահատման ենթարկել:

Առաձին քննարկման առարկա է դարձվում նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարացման հնարավորության հարցը այն պայմաններում, երբ դատարանի նախորդ որոշմամբ սահմանված տարբեր օբյեկտիվ պատճառներով հետաքննության մարմնի կողմից հնարավոր չի լինում կատարել կաշառքի առարկայի հանձնում: Առկա օրենսդրական կարգավորումների և վերլուծության արդյունքում՝ հեղինակը նախ փաստում է, որ նման իրավիճակներում չէ քննարկվող գաղտնի քննչական գործողության ժամկետի երկարացում, ապա՝ առաջարկում է օրենսդրական փոփոխությունների եղանակով հաղթահարել նշված բացը և մյուս գաղտնի քննչական գործողությունների օրինակով այդպիսի դատավարական հնարավորություն նախատեսել:

Հոդվածի շրջանակներում քննարկվում է նաև գաղտնի քննչական գործողությունների կատարման անհնարինության դեպքում հետաքննության մարմնի կողմից արձանագրություն չկազմելու իրավաչափության, ինչպես նաև հեռախոսային հաղորդակցության վերահսկման արձանագրության մեջ ձայնագրության բառացի վերարտադրության հնարավորության բացակայության պայմաններում (օրինակ, երբ անձինք հաղորդակցվում են բարբառով կամ օտար լեզվով) պրակտիկայում ի հայտ եկող խնդիրների հաղթահարմանը վերաբերող հարցեր:

Արդյունքում հեղինակի կողմից ներկայացվում են կոնկրետ առաջարկներ՝ միտված ոչ միայն գաղտնի քննչական գործողությունները սահմանող քրեադատավարական նորմերի կատարելագործմանը, այլ նաև՝ գործնականում դրանց կիրառման ընթացքում առաջացող խնդիրների հաղթահարմանը:

Annotation

This article is dedicated to analyzing several problematic aspects regarding the legal regulation of secret investigative actions provided by the new Criminal Procedure Code of Armenia.

The author addresses the admissibility of using results from secret investigative actions conducted through direct visual internal observation without technical means. Consequently, it is proposed either to exclude legislatively the possibility of conducting internal visual observation as a secret investigative action or to establish procedural limitations on using the results of such observations as evidence, given that information obtained through this method cannot be objectively assessed.

Separately, the issue of extending deadlines for secret investigative actions involving imitation of giving or receiving bribes is discussed. This specifically refers to situations when investigative bodies, due to objective reasons, fail to deliver the bribery object within a time frame initially established by a court decision. After analyzing current legislation and practical applications, the author concludes that there is currently no possibility of extending such deadlines and recommends legislative amendments to allow such procedural flexibility, similar to other secret investigative actions.

Moreover, the author examines the legality of not preparing protocols by investigative bodies when secret investigative actions cannot be carried out. The article also covers practical issues related to difficulties in precisely transcribing telephone communications in monitoring protocols (e.g., when communication occurs in dialects or foreign languages).

In conclusion, the author provides specific proposals aimed not only at improving criminal procedural norms regulating secret investigative actions but also at addressing practical problems arising during their application.

Аннотация

В статье анализируются отдельные проблемы правового регулирования секретных следственных действий, предусмотренных новым Уголовно-процессуальным кодексом Республики Армения.

Автор рассматривает вопрос допустимости использования в качестве доказательств результатов визуального внутреннего наблюдения, проведённого без технических средств. В связи с этим предлагается либо законодательно исключить возможность проведения внутреннего визуального наблюдения в рамках секретного следственного действия, либо предусмотреть невозможность использования результатов такого наблюдения в качестве доказательств, так как полученные таким образом данные невозможно объективно оценить.

Отдельно рассмотрен вопрос о возможности продления сроков секретного следственного действия в виде имитации дачи или получения взятки, когда следственный орган по объективным причинам не может осуществить передачу предмета взятки в ранее установленный судом срок. Проанализировав законодательство и практику, автор констатирует отсутствие такой возможности и предлагает внести соответствующие изменения в законодательство, предусмотрев такую возможность по аналогии с другими секретными следственными действиями.

Кроме того, обсуждаются вопросы законности неоформления протокола следственным органом в случае невозможности выполнения секретного следственного действия, а также проблемы практики при невозможности дословного воспроизведения телефонных переговоров в протоколе контроля телефонных переговоров (например, когда общение ведётся на диалекте или иностранном языке).

В заключении автором предлагаются конкретные рекомендации, направленные не только на совершенствование уголовно-процессуальных норм, регулирующих секретные следственные действия, но и на устранение проблем, возникающих в процессе их практического применения.

Հիմնաբառեր՝ քննիչ, հետաքննության մարմին, գաղտնի քննչական գործողություններ, ներքին դիտում, արտաքին դիտում, կաշառք տալու նմանակում, կաշառք ստանալու նմանակում, ապացույց, արձանագրություն:

Key words: investigator, investigative body, secret investigative actions, internal observation, external observation, imitation of giving a bribe, imitation of receiving a bribe, evidence, protocol.

Ключевые слова: следователь, орган дознания, секретные следственные действия, внутреннее наблюдение, наружное наблюдение, имитация дачи взятки, имитация получения взятки, доказательство, протокол.

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ / CRIMINAL LAW AND CRIMINOLOGY / УГОЛОВНОЕ ПРАВО И КРИМИНОЛОГИЯ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի փորձագետ

GYULAMIRYAN EDGAR
Expert of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-methodological activities of the RA Academy of Justice

ГЮЛАМИРЯН ЭДГАР
Эксперт отдела по организации научно-исследовательских и программно-методических работ Академии юстиции РА

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ*

STATE TREASON: CRIMINAL-LEGAL ANALYSIS AND THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA*

ГОСУДАРСТВЕННАЯ ИЗМЕНА: УГОЛОВНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ И ЗАКОНОДАТЕЛЬСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ*

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է պետական դավաճանության հանցակազմի քրեաիրավական վերլուծությանը՝ կենտրոնանալով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային փորձի վրա: Ուսումնասիրվում է հանցակազմի պատմական էվոլյուցիան՝ XIII դարի հայկական «Դատաստանագրքից» մինչև ժամանակակից օրենսդրություն:

Նշվում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական գործող օրենսգիրքը պետական դավաճանությունը սահմանում է որպես պետության անվտանգության դեմ ուղղված գործողություններ, ներառյալ լրտեսությունը, օտարերկրյա պետության հետ համագործակցությունը, ապօրինի ռազմական գործողությունները և պետական գաղտնիքների բացահայտումը:

Համեմատական վերլուծություն է կատարվում Ռուսաստանի, Բելառուսի, Ադրբեջանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի և Ֆրանսիայի օրենսդրությունների հետ: Ընդգծվում է, որ ԱՄՆ-ի *United States v. Bollman* (1807) գործը պահանջում է պատերազմի ակնհայտ գործողություններ, մինչդեռ Ֆրանսիայի *Code Pénal* (1994) խստորեն պատժում է կիբերտարածքում ազգային անվտանգությանը վնասող գործողությունները, ներառյալ ապատեղեկատվության տարածումը:

Անդրադարձ է կատարվում ժամանակակից մարտահրավերներին, մասնավորապես՝ կիբերլրտեսությանը, հիբրիդային սպառնալիքներին և տեղեկատվական մանիպուլյացիաներին, առաջարկելով օրենսդրական բարեփոխումներ Հայաստանում: Դրանք ներառում են կիբերտարածքի կարգավորում և պատժի ավելի ճկուն համակարգ՝ հանցագործությունների կանխարգելման համար:

Ամփոփելով՝ հեղինակը եզրակացնում է, որ պետական դավաճանության կարգավորումը պետք է հավասարակշռի պետական շահերի պաշտպանությունը և անհատական ազատությունները՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, աշխարհաքաղաքական սպառնալիքները և միջազգային իրավական չափանիշները:

Annotation

The article examines the criminal law framework of state treason, focusing on the legislation of the Republic of Armenia and international practices. It traces the historical evolution of the offense, from medieval Armenian law to contemporary legal systems. The study centers on the Criminal Code of Armenia (2022), which defines state treason as acts undermining national security, including espionage and collaboration with foreign states.

A comparative analysis is conducted with the legal frameworks of Russia, Belarus, Azerbaijan, the United States, Germany, and France, highlighting distinct approaches, such as the U.S. requirement of actual warfare established in *United States v. Bollman* and France's stringent penalties under the *Code Pénal*.

The study also addresses modern challenges, particularly cyberespionage and disinformation, proposing legislative reforms in Armenia to enhance national security. It concludes that effective regulation of state treason must balance the protection of state interests with individual liberties, adapting to contemporary technological and geopolitical threats.

Аннотация

Статья посвящена уголовно-правовому анализу состава преступления государственной измены с акцентом на законодательство Республики Армения и международный опыт. Исследуется историческая эволюция состава преступления, начиная с армянского права XIII века до современных законодательных норм.

Анализируются положения действующего Уголовного кодекса Республики Армения, определяющие государственную измену как действия, подрывающие национальную безопасность, включая шпионаж и сотрудничество с иностранным государством.

Проводится сравнительный анализ с законодательством России, Беларуси, Азербайджана, США, Германии и Франции, подчеркивая особенности регулирования, такие как требование войны в деле Боллмана в США и строгие санкции во Франции (*Code Pénal*).

Работа также рассматривает современные вызовы, в частности кибершпионаж и дезинформацию, предлагая реформы законодательства в Армении для укрепления национальной безопасности.

В заключении подчеркивается необходимость обеспечения баланса между защитой государственных интересов и индивидуальными свободами, с учетом современных технологических и геополитических угроз.

Հիմնաբառեր՝ պետական դավաճանություն, քրեաիրավական վերլուծություն, ՀՀ օրենսդրություն, ազգային անվտանգություն, լրտեսություն, կիբերտարածք, ապատեղեկատվություն, հիբրիդային սպառնալիքներ:

Key words: state treason, criminal-legal analysis, legislation of the Republic of Armenia, national security, espionage, cyberspace, disinformation, hybrid threats.

Ключевые слова: государственная измена, уголовно-правовой анализ, законодательство Республики Армения, национальная безопасность, шпионаж, киберпространство, дезинформация, гибридные угрозы.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ISSN 2579-2806

ԲԱՆԲԵՐ

Արդարադատության ակադեմիայի

BULLETIN

of Academy of Justice

ВЕСТНИК

Академии юстиции

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ SCIENTIFIC - PRACTICAL JOURNAL НАУЧНО - ПРАКТИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2026 1(17)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / THEORY OF STATE AND LAW / ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

HOVSEPYAN VOLODYA
Applicant at the Institute of Philosophy, Sociology, and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia

ОВСЕПЯН ВОЛОДЯ
Соискатель Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՑ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ*

AROUND THE CONTROVERSIAL ISSUES OF THE CREATION AND PRACTICAL APPLICATION OF THE LAWCODE OF MKHITAR GOSH*

К ПРОБЛЕМНЫМ ВОПРОСАМ СОЗДАНИЯ И ПРАКТИЧЕСКОГО ПРИМЕНЕНИЯ СУДЕБНИКА МХИТАРА ГОША*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն աշխատանքում հետազոտվել են հռչակավոր օրենսգետ Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության գործադրման հետ կապված մի քանի խնդրահարույց հարցեր, մի աշխատություն, որը Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) գործադիր խորհրդի 221-րդ նստաշրջանի 2025 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ ներառվել է «Աշխարհի հիշողություն» (Memory of the World Register) միջազգային ռեգիստրում:

Աշխատանքում նոր հիմնավորումներով վերլուծվել են Գոշի Դատաստանագրքի ստեղծման քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանները, ինչպես նաև միջնադարյան Հայաստանում, հայկական գաղութներում, մասնավորապես՝ Հայոց արևելից կողմերում Գոշի աշխատության գործնական կիրառման հիմնախնդիրները: Այդ առումով Գոշի թողած իրավաբանական ժառանգությունը մեծ ազդեցություն է թողել աշխարհասփյուռ հայ ժողովրդի ճակատագրի վրա, մանավանդ քաղաքացիական իրավահարաբերություններին վերաբերվող իրավանորմերի հարցում:

Գոշի Դատաստանագիրքը մշտապես ուղեկցել է հայ ժողովրդին՝ նրա բոլոր դեգերումների ընթացքում և, որպես միակ ազգային օրենսգիրք, գործադրվել է ոչ միայն Հայոց աշխարհում, այլև հայկական գաղութներում: Այն մտել է նաև մի քանի երկրների օրինագրքերի մեջ:

Հայ իրականության մեջ Գոշն առաջինն էր, ով աշխարհիկ իրավաբանական օրենսդրության հիմքը դրեց, որի ստեղծումը ժամանակի պահանջ էր և արժանապատվության հարց՝ լռեցնելու նրանց, ովքեր մեղադրում էին հայերին օրենքներ չունենալու մեջ: Հետևաբար, հպարտությամբ կարող ենք նշել, որ Գոշի Դատաստանագիրքը նույնպիսի նշանակություն ունի, ինպիսիք են «Մովսիսական օրենքները», «Մանուի օրենքները», «Խեթական օրենքները», «Համմուրաբիի օրենքները», «Ռուսական պրավդան» և այլն:

ANNOTATION

The article examines a number of problematic issues related to the implementation of the work of the famous legal scholar Mkhitar Gosh, included in the Memory of the World Register by the decision of the 221st session of the UNESCO Executive Board on April 10, 2025.

The paper analyzes the political, socio-economic and cultural conditions for the creation of Gosh's "Code of Laws" with new justifications, as well as the fundamental problems of the practical application of Gosh's work in medieval Armenia, in Armenian colonies, in particular, in the Armenian Eastern regions of Armenia. In this sense, the legal legacy left by Gosh had a profound impact on the fate of the Armenian people scattered throughout the world, particularly in matters of legal norms concerning civil relations.

Gosh's Code of Laws always accompanied the Armenian people throughout their travels and, as the only national code, was implemented not only throughout the Armenian world but also in Armenian colonies. It was also incorporated into the legal codes of several countries.

In Armenian reality, Gosh was the first to lay the foundations of secular legal legislation, the creation of which was a requirement of the time and a matter of dignity in order to silence those who accused Armenians of the absence of laws. Therefore, we can proudly note that the Code of Laws of Gosh has the same significance as the “Laws of Moses”, “Laws of Manu”, “Hittite Laws”, “Laws of Hammurabi”, “Russian Truth”, etc.

АННОТАЦИЯ

В данной работе рассматривается ряд проблематичных вопросов, связанных с реализацией труда известного правоведа Мхитара Гоша, включённого в реестр «Память мира» (англ. Memory of the World Register) решением 221-й сессии Исполнительного совета ЮНЕСКО от 10 апреля 2025 года.

В работе с новыми обоснованиями анализируются политические, социально-экономические и культурные условия создания «Судебника» Гоша, а также основополагающие проблемы практического применения труда Гоша в средневековой Армении, в армянских колониях, в частности, в Армянских восточных краях. В этом смысле правовое наследие, оставленное Гошем, оказало огромное влияние на судьбу армянского народа, рассеянного по всему миру, особенно в вопросах правовых норм, касающихся гражданско-правовых отношений.

Кодекс законов Гоша всегда сопровождал армянский народ на протяжении всех его странствий и, будучи единственным национальным кодексом, был внедрен не только в армянском мире, но и в армянских колониях. Он также вошел в свод законов нескольких стран.

В армянской действительности Гош первым заложил основы светского правового законодательства, создание которого было требованием времени и делом достоинства, чтобы заставить замолчать тех, кто обвинял армян в отсутствии законов. Следовательно, с гордостью можем отметить, что Судебник Гоша имеет такое значение, какую имеют «Моисеевы законы», «законы Ману», «Хеттские законы», «законы Хаммурапи», «Русская правда» и т.д.

Հիմնաբառեր՝ Բագրատունյաց թագավորություն, Կիլիկյան Հայաստան, Զաքարյան Հայաստան, ամիրսպասալար, Խաչեն, Կանոնական օրինադրություն, Դատաստանագիրք:

Keywords: Kingdom of the Bagratunis, Cilician Armenia, Zakarya Armenia, amirspasalar, Khachen, Canon law, the Lawcode.

Ключевые слова: Царство Багратидов, Киликийская Армения, армянское княжество Захаридов, амирспасалар, Хачен, сборник законов, Судебник.

ՇԱՖԱԼՈՎԻՉ ԱՆՆԱ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Բելառուսի պետական տնտեսագիտական համալսարանի իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ

SHAFALOVICH ANNA
Candidate of Legal Sciences, Associate Professor, Associate Professor of the Chair of Theory and History of Law of The Belarusian State Economic University

ШАФАЛОВИЧ АННА
Кандидат юридических наук, доцент, доцент кафедры теории и истории права Белорусского государственного экономического университета

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ). ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԴՈԿՏՐԻՆԱԼ ՄՈՏԵՑՈՒՄ*

SYSTEM OF STATE BODIES AND SYSTEM OF STATE AUTHORITIES (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF BELARUS): DOCTRINAL APPROACH TO STUDY*

СИСТЕМА ГОСУДАРСТВЕННЫХ ОРГАНОВ И СИСТЕМА ОРГАНОВ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ БЕЛАРУСЬ): ДОКТРИНАЛЬНЫЙ ПОДХОД К ИЗУЧЕНИЮ*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում քննության են առնվում Բելառուսի Հանրապետությունում պետական մարմինների համակարգի (պետական ապարատի) վերաբերյալ դոկտրինալ դրույթները և դրանք համեմատվում են սահմանադրական օրենսդրության նորմերի հետ՝ տվյալ մարմինների իրավական կարգավիճակի մասով: Հետազոտության արդյունքում հեղինակը գալիս է այն եզրակացության, որ նպատակահարմար է տարբերակել պետական իշխանության մարմինները (նկատի ունենալով Սահմանադրությամբ ամրագրված իշխանության երեք ճյուղերը՝ իշխանություն նեղ իմաստով) և պետական մարմինները, որոնք իրականացնում են այլ իշխանական լիազորություններ, այսինքն՝ իշխանություն ամենալայն իմաստով: Բելառուսի Հանրապետությունում պետական իշխանության մարմիններին, ըստ դոկտրինալ մոտեցման, նեղ իմաստով կարելի է դասել՝ օրենսդիր մարմինը՝ Խորհրդարանը՝ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովը, ինչպես նաև գործադիր և դատական մարմինները:

Պետական մարմինների համակարգը կազմված է պետական մարմինների հետևյալ խմբերից՝ ներկայացուցչական (Բելառուսի Ժողովրդական համաբելառուսական ժողովը, Բելառուսի Հանրապետության Նախագահը, օրենսդիր մարմինը՝ Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովը, և տեղական պատգամավորների խորհուրդները), գործադիր-կարգադրիչ (Կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, նախարարությունները և պետական կոմիտեները, ինչպես նաև տեղական գործադիր-կարգադրիչ մարմինները՝ գործկոմները և տեղական վարչակազմերը), դատական (Սահմանադրական դատարանը և ընդհանուր իրավասության դատարանների համակարգը՝ Գերագույն դատարանի գլխավորությամբ), վերահսկիչ-վերահսկողական (Դատախազությունը և Պետական վերահսկողության կոմիտեն) և այլ պետական մարմիններ (օրինակ՝ Բելառուսի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, կրոնների և ազգությունների գործերով լիազորը, Բելառուսի Հանրապետության Ազգային բանկը):

ANNOTATION

The article examines the doctrinal provisions regarding the system of state bodies (the state apparatus) in the Republic of Belarus, and compares them with the norms of constitutional legislation in the part of the legal status of these bodies. As a result of the study, the author concludes that it is appropriate to distinguish between state authorities (referring to the three branches of state power mentioned in the Constitution, which are the narrowest sense of power) and other state bodies (which exercise other empowerments, i.e., the broadest sense of power).

According to the doctrinal approach, the following bodies can be considered to be part of the state authorities in the Republic of Belarus: the legislative body, the Parliament, the National Assembly of the Republic of Belarus; and the executive and judicial bodies. The system of state bodies consists of the following groups of state bodies: representative (the All – Belarusian People's Assembly, the President of the Republic of Belarus, the legislative body-the National Assembly of the Republic of Belarus and local Councils of Deputies); executive and administrative (the Government-the Council of Ministers, ministries and state committees, as well as local executive and administrative bodies-executive committees and local administrations); judicial (the Constitutional Court and the system of courts of general jurisdiction headed by the Supreme Court); control and supervisory (the Prosecutor's Office and the State Control Committee) and other state bodies (for example, the Central Election Commission of the Republic of Belarus, the Commissioner for Religious Affairs and The National Bank of the Republic of Belarus).

АННОТАЦИЯ

Статья рассматривает доктринальные положения относительно системы государственных органов (государственного аппарата) в Республике Беларусь и сравнивает их с нормами конституционного законодательства в части правового статуса данных органов. В результате исследования автор приходит к выводу о целесообразности различия между государственными органами власти (имеются в виду три ветви власти, названные в Конституции-власть в узком смысле) и государственными органами, осуществляющими иные властные полномочия, т. е. власть в самом широком смысле.

К органам государственной власти в Республике Беларусь, согласно доктринальному подходу, в узком смысле можно отнести: законодательный орган – Парламент – Национальное собрание Республики Беларусь; исполнительные и судебные органы. Система государственных органов состоит из следующих групп государственных органов: представительных (Всебелорусское народное собрание, Президент Республики Беларусь, законодательный орган – Национальное собрание Республики Беларусь – местные Советы депутатов); исполнительно-распорядительных (Правительство – Совет Министров, министерства и государственные комитеты, а также местные исполнительно-распорядительные органы – исполкомы и местные администрации); судебных (Конституционный Суд и система судов общей юрисдикциии во главе с Верховным Судом); контрольно-надзорных (Прокуратура и Комитет государственного контроля) и иных государственных органов (например, Центральная избирательная комиссия Республики Беларусь, Уполномоченный по делам религий и национальностей, Национальный банк Республики Беларусь).

Հիմնաբառեր՝ պետական իշխանություն, պետության մեխանիզմ, պետական ապարատ, ներկայացուցչական մարմիններ, գործադիր մարմիններ, պետական մարմինների համակարգ, պետական իշխանության մարմինների համակարգ:

Keywords: state power, mechanism of the state, state apparatus, representative bodies, executive bodies, system of state bodies, system of state authorities.

Ключевые слова: государственная власть, механизм государства, государственный аппарат, представительные органы, исполнительные органы, система государственных органов, система органов государственной власти.

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ / PUBLIC LAW / ПУБЛИЧНОЕ ПРАВО

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ
ՀՀ ՊՆ Ռազմագիտակրթական քաղաքականության վարչության միջազգային ռազմական կրթության բաժնի ավագ սպա, մայոր, ԵՀՀ միջազգային հարաբերությունների և իրավագիտության ինստիտուտի դասախոս, Հայաստանի եվրոպական համալսարանի հայցորդ

SHAHNAZARYAN NORIK
Senior Officer of the International Military Education Division of the Military Scientific Educational Policy Department of the Ministry of Defense of the Republic of Armenia, Major, Lecturer at the Institute of International Relations and Jurisprudence of Yerevan Haybusak University, Applicant at the Armenian European University

ШАХНАЗАРЯН НОРИК
Старший офицер отдела международного военного образования Управления военно-образовательной политики МО РА, майор, преподаватель Института международных отношений и юриспруденции Ереванского университета «Айбусак», соискатель Армянского европейского университета

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)*

PROBLEMS OF THE SUPREMACY OF THE CONSTITUTION (IN THE CONTEXT OF THE CONSTITUTIONAL REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA)*

ПРОБЛЕМЫ ВЕРХОВЕНСТВА КОНСТИТУЦИИ (В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РЕФОРМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն գիտական հոդվածը նվիրված է Սահմանադրության գերակայության սկզբունքի տեսական, ինստիտուցիոնալ և գործնական հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանը՝ համաշխարհային սահմանադրական փորձի և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի զարգացման համատեքստում:

Հետազոտության նպատակն է բացահայտել սահմանադրական գերակայության իրականացման կառուցակարգային խոչընդոտները, գնահատել սահմանադրական վերահսկողության գործող մոդելի արդյունավետությունը և առաջարկել բարեփոխման ուղղություններ՝ հաշվի առնելով ՀՀ-ում ընթացող սահմանադրական բարեփոխումների գործընթացը: Հոդվածում կիրառվել են համադրական-իրավական, համակարգային և վերլուծական մեթոդներ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրության գերակայությունը ոչ միայն նորմատիվ հիերարխիայի գագաթնային դիրք է, այլև արժեքային համակարգ, որը պետք է ապահովի մարդու իրավունքների իրական պաշտպանություն, իշխանությունների տարանջատում և իրավական որոշակիություն: ՀՀ-ում առկա են խնդիրներ՝ կապված օրենսդրության որակի, իրավակիրառ պրակտիկայի անհամաչափության, միջազգային պարտավորությունների և սահմանադրական ինքնության հարաբերակցության, ինչպես նաև Սահմանադրական դատարանի լիազորությունների արդյունավետ իրացման հետ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սահմանադրական բարեփոխումների նոր փուլում: Սահմանադրական փոփոխությունների քննարկումները վեր են հանում հարցեր՝ կապված սահմանադրական վերահսկողության մոդելի, իշխանությունների փոխհարաբերությունների, միջազգային իրավունքի և ազգային սահմանադրական ինքնության հարաբերակցության, ինչպես նաև Սահմանադրության կիրառման մշակույթի հետ: Հետազոտության խնդիրն է պարզել, արդյոք ՀՀ-ում Սահմանադրության գերակայությունը գործում է որպես իրական, արդյունավետ մեխանիզմ, թե մնում է հիմնականում ձևական նորմ: Նորույթը կայանում է համադրական վերլուծության մեջ, որտեղ համաշխարհային փորձը համադրվում է հայ սահմանադրական մտքի և Սահմանադրական դատարանի պրակտիկայի հետ:

Հոդվածում ձևակերպվում են առաջարկություններ, որոնք կարող են ծառայել սահմանադրական բարեփոխումների հետագա փուլում Սահմանադրության իրական և ոչ ձևական գերակայության ամրապնդմանը:

ANNOTATION

This scientific article is dedicated to a comprehensive analysis of the theoretical, institutional, and practical issues of the principle of constitutional supremacy in the context of global constitutional experience and the development of the legal system of the Republic of Armenia. The purpose of the study is to identify structural obstacles to the implementation of constitutional supremacy, assess the effectiveness of the current model of constitutional review, and propose directions for reform, taking into account the ongoing constitutional reform process in the Republic of Armenia. The research applies comparative-legal, systemic, and analytical methods. The study demonstrates that constitutional supremacy is not merely the highest level in the hierarchy of legal norms, but also a value-based system that must ensure the genuine protection of human rights, the separation of powers, and legal certainty. There are issues in the Republic of Armenia related to the quality of legislation, inconsistencies in law-enforcement practice, the relationship between international obligations and constitutional identity, as well as the effective exercise of the powers of the Constitutional Court.

The relevance of the topic is determined by the fact that the Republic of Armenia is currently undergoing a new phase of constitutional reforms. Discussions on constitutional amendments raise questions concerning the model of constitutional review, the interaction between branches of government, the relationship between international law and national constitutional identity, as well as the culture of constitutional implementation. The objective of the research is to determine whether constitutional supremacy in Armenia functions as a real and effective mechanism or remains largely a formal norm. The novelty of the study lies in its comparative analysis, which juxtaposes global experience with Armenian constitutional thought and the practice of the Constitutional Court.

The article formulates recommendations that may contribute to strengthening the real, rather than merely formal, supremacy of the Constitution at subsequent stages of constitutional reform.

АННОТАЦИЯ

Настоящая научная статья посвящена комплексному анализу теоретических, институциональных и практических проблем принципа верховенства Конституции в контексте мирового конституционного опыта и развития правовой системы Республики Армения. Цель исследования – выявить структурные препятствия реализации конституционного верховенства, оценить эффективность действующей модели конституционного контроля и предложить направления реформ с учётом процесса конституционных преобразований, осуществляемых в Республике Армения. В работе применены сравнительно-правовой, системный и аналитический методы. Исследование показывает, что верховенство Конституции представляет собой не только высшую ступень нормативной иерархии, но и ценностную систему, призванную обеспечивать реальную защиту прав человека, разделение властей и правовую определённость. В Республике Армения существуют проблемы, связанные с качеством законодательства, несоразмерностью правоприменительной практики, соотношением международных обязательств и конституционной идентичности, а также с эффективной реализацией полномочий Конституционного суда.

Актуальность темы обусловлена тем, что Республика Армения находится на новом этапе конституционных реформ. Обсуждение конституционных изменений поднимает вопросы, касающиеся модели конституционного контроля, взаимоотношений ветвей власти, соотношения международного права и национальной конституционной идентичности, а также культуры применения Конституции. Задача исследования – определить, действует ли верховенство Конституции в Республике Армения как реальный и эффективный механизм либо остаётся преимущественно формальной нормой. Научная новизна работы заключается в сравнительном анализе, в рамках которого мировой опыт сопоставляется с армянской конституционно-правовой мыслью и практикой Конституционного суда.

В статье сформулированы предложения, которые могут способствовать укреплению реального, а не формального верховенства Конституции на последующих этапах конституционных реформ.

Հիմնաբառեր՝ սահմանադրականություն, սահմանադրական իրավունք, իրավունքի գերակայություն, օրենսդրություն, սահմանադրական բարեփոխումներ, սահմանադրական վերահսկողություն, սահմանադրական մշակույթ:

Keywords: constitutionalism, constitutional law, rule of law, legislation, constitutional reforms, constitutional review, constitutional culture.

Ключевые слова: конституционализм, конституционное право, верховенство права, законодательство, конституционные реформы, конституционный контроль, конституционная культура.

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ / PRIVATE LAW / ЧАСТНОЕ ПРАВО

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԱՐԻԵԼ
Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

BARSEGHYAN TARIEL
PhD Student of the Chair of Civil Law of the Yerevan State University

БАРСЕГЯН ТАРИЕЛ
Соискатель кафедры гражданского права Ереванского государственного университета

ԱՆԱՐԴԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ*

UNFAIR TERMS AS FEATURES CHARACTERIZING THE LEGAL POSITION OF THE WEAKER PARTY OF CONTRACT*

НЕСПРАВЕДЛИВЫЕ УСЛОВИЯ КАК ПРИЗНАКИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ СЛАБОЙ СТОРОНЫ ДОГОВОРА*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գիտական հոդվածում պայմանագրի անարդար պայմաններն ուսումնասիրվում են որպես պայմանագրային հարաբերություններում թույլ կողմի իրավական դիրքը բնութագրող առանցքային չափանիշներ:

Հետազոտությունը հիմնված է օտարերկրյա պետությունների իրավական փորձի, միջազգային իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծության վրա:

Հոդվածում վերլուծվում են իրավունքի գիտության մեջ առկա բազմազան դոկտրինալ մոտեցումները պայմանագրի անարդար պայմանների հասկացության և իրավական բնույթի վերաբերյալ, ինչպես նաև թույլ կողմի պաշտպանությանն ուղղված իրավական մեխանիզմները:

Աշխատանքում վեր են հանվում գործող իրավակարգավորումներում առկա խնդիրներն ու բացերը, գնահատվում են դրանց արդյունավետությունը պայմանագրային հավասարակշռության ապահովման տեսանկյունից:

Ուսումնասիրության արդյունքներով ձևակերպվում են հիմնավորված առաջարկություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության պայմանագրային իրավունքի կատարելագործմանը և պայմանագրային հարաբերություններում թույլ կողմի իրավական պաշտպանության ուժեղացմանը:

ANNOTATION

In the scientific article, unfair contract terms are examined as key criteria characterizing the legal position of the weaker party in contractual relations.

The research is based on a comparative analysis of the legal experience of foreign states, international legal instruments, and the legislative regulations of the Republic of Armenia.

The article analyzes various doctrinal approaches existing in legal scholarship regarding the concept and legal nature of unfair contract terms, as well as legal mechanisms aimed at protecting the weaker party.

The study identifies problems and gaps in the existing legal regulations and assesses their effectiveness from the perspective of ensuring contractual balance.

Based on the results of the research, substantiated proposals are formulated aimed at improving the contract law of the Republic of Armenia and strengthening the legal protection of the weaker party in contractual relations.

АННОТАЦИЯ

В научной статье несправедливые условия договора рассматриваются как ключевые критерии, характеризующие правовое положение слабой стороны в договорных отношениях.

Исследование основано на сравнительном анализе правового опыта зарубежных государств, международно-правовых актов, а также законодательного регулирования Республики Армения.

В статье анализируются различные доктринальные подходы, существующие в юридической науке, относительно понятия и правовой природы несправедливых условий договора, а также правовые механизмы, направленные на защиту слабой стороны.

В работе выявляются проблемы и пробелы действующего правового регулирования и оценивается их эффективность с точки зрения обеспечения договорного баланса.

По результатам исследования сформулированы обоснованные предложения, направленные на совершенствование договорного права Республики Армения и усиление правовой защиты слабой стороны в договорных отношениях.

Հիմնաբառեր՝ թույլ կողմ, անարդար, պայմաններ, բարեխղճություն, ողջամտություն, արդարություն, սպառող, պայմանագիր, անհավասարակշռություն, հավասարություն, էական խախտում, մեկնաբանում:

Key words: weak party, unfair conditions, honesty, reasonableness, justice, consumer, contract, imbalance, equality, material breach, interpretation.

Ключевые слова: слабая сторона, несправедливые условия, добросовестность, здравый смысл, справедливость, потребитель, договор, дисбаланс, равенство, существенное нарушение, толкование.

ԽԱՉԻԿՅԱՆ ՄԱՐՏԻՆ
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ԲԻ ԷԼ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ավագ իրավաբան, փաստաբան

KHACHIKYAN MARTIN
PhD student at the Yerevan State University Chair of Civil Law
«BLC GROUP» LLC senior associate, attorney

ХАЧИКЯН МАРТИН
Аспирант кафедры Гражданского права Ереванского государственного университета, старший юрист ООО «БИ ЭЛ СИ ГРУП», адвокат

ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ*

CORRELATION OF THE PRINCIPLE OF GOOD FAITH AND THE PROHIBITION OF ABUSE OF RIGHTS IN CIVIL LAW*

СООТНОШЕНИЕ ПРИНЦИПА ДОБРОСОВЕСТНОСТИ И ЗАПРЕТА ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ ПРАВОМ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բարեխղճության սկզբունքը քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդիսանում է հիմնարար արժեք, որը սահմանում է կողմերի վարքագծի դրական չափանիշներ և ապահովում իրավական հարաբերությունների կայունություն:

Այն արտահայտում է ազնվության, արդարության և փոխադարձ վստահության պահանջը: Իրավունքների չարաշահման արգելքը սահմանում է սուբյեկտիվ իրավունքների իրացման թույլատրելի սահմանները և կանխում դրանց օգտագործումը վնասաբեր նպատակներով:

Իրավունքի չարաշահումը դիտվում է որպես անբարեխղճության, ավելի լայն կատեգորիայի, մասնավոր դրսևորում: Այն ներկայացնում է իրավունքների նպատակային և բովանդակային ոչ իրավաչափ կիրառում՝ հակասելով իրավակարգի նպատակի հետ և վտանգելով իրավահավասարակշռությունն ու կողմերի փոխհամաձայնությունը քաղաքացիական հարաբերություններում: Իրավունքի չարաշահումը հաճախ արտացոլում է սուբյեկտիվ իրավունքների իրականացման դեպքում պատասխանատվության և բարոյական չափանիշների անտեսումը: Բարեխղճության սկզբունքը սահմանում է դրական ուղենիշ՝ «ինչպես պետք է գործել», ուղղորդելով սուբյեկտներին ազնվորեն և արդարացի օգտագործել իրենց իրավունքները, իսկ չարաշահման արգելքը սահմանափակում է՝ «ինչ չի կարելի անել», կանխելով իրավակարգի նպատակին հակասող գործողությունները:

Իրավունքի չարաշահումը հնարավոր է միայն բարեխղճության լույսի ներքո գնահատել՝ որպես իրավունքի նպատակային և սոցիալականորեն վնասակար կիրառություն, իսկ բարեխղճությունը որպես ավելի լայն սկզբունք ուղղորդում է սուբյեկտների վարքագիծը և ընդգծում արդար, նպատակային իրավագործունեությունը:

Այս երկու սկզբունքների հարաբերակցության ուսումնասիրումը ստեղծում է տեսական և գործնական հիմք, որը թույլ է տալիս գնահատել վարքագիծը և կիրառել համապատասխան իրավաբանական հետևանքներ, ապահովելով իրավահավասարակշռություն և կանխատեսելիություն քաղաքացիական հարաբերություններում:

ANNOTATION

The principle of good faith in civil relations is a fundamental value that establishes positive standards of conduct for the parties and ensures the stability of legal relationships.

It embodies the requirements of honesty, fairness, and mutual trust. The prohibition of abuse of rights defines the permissible limits of exercising subjective rights and prevents their use for harmful purposes.

Abuse of rights is considered a particular manifestation of the broader category of bad faith. It represents a purposeful and substantively unlawful exercise of rights, contrary to the objectives of the legal system and threatening the legal balance and agreement between parties in civil relations. Abuse of rights often reflects a disregard for responsibility and moral standards in the exercise of subjective rights. The principle of good faith sets a positive guideline – "how one should act" – directing subjects to exercise their rights honestly and fairly, while the prohibition of abuse of rights imposes a limitation – "what one must not do" – preventing actions contrary to the purposes of the legal order.

Abuse of rights can only be assessed in the light of good faith as a purposeful and socially harmful exercise of rights, whereas good faith, as a broader principle, guides the behavior of subjects and emphasizes fair and purposeful legal conduct.

Studying the relationship between these two principles provides a theoretical and practical foundation for assessing conduct and applying appropriate legal consequences, ensuring legal balance and predictability in civil relations.

АННОТАЦИЯ

Принцип добросовестности в гражданских правоотношениях является фундаментальной ценностью, которая устанавливает положительные критерии поведения сторон и обеспечивает стабильность правовых отношений.

Он выражает требование честности, справедливости и взаимного доверия. Ограничение злоупотребления правом определяет допустимые границы реализации субъективных прав и предотвращает их использование в ущербных целях.

Злоупотребление правом рассматривается как частное проявление более широкой категории недобросовестности. Оно представляет собой целенаправленное и содержательно неправомерное использование прав, противоречащее целям правового порядка и угрожающее правовому равновесию и согласованности сторон в гражданских отношениях. Злоупотребление правом часто отражает игнорирование ответственности и моральных стандартов при реализации субъективных прав. Принцип добросовестности устанавливает положительную ориентировку – «как следует действовать», направляя субъектов на честное и справедливое использование своих прав, в то время как запрет злоупотребления правом ограничивает – «чего нельзя делать», предотвращая действия, противоречащие целям правового порядка.

Злоупотребление правом может оцениваться только в свете добросовестности как целенаправленное и социально вредное использование права, тогда как добросовестность, будучи более широким принципом, направляет поведение субъектов и подчеркивает справедливое и целенаправленное осуществление прав.

Изучение соотношения этих двух принципов создает теоретическую и практическую основу, позволяя оценивать поведение и применять соответствующие правовые последствия, обеспечивая правовое равновесие и предсказуемость в гражданских отношениях.

Բանալի բառեր՝ իրավաբանական անձ, բարեխղճություն, անբարեխիղճ վարքագիծ, բարեխիղճ գործել, իրավունքի չարաշահում, իրավունքի չարաշահման արգելք, իրավական հետևանքներ, սուբյեկտիվ իրավունք:

Key words: legal entity, good faith, dishonest behavior, acting in good faith, abuse of rights, prohibition of abuse of rights, legal consequences, subjective right.

Ключевые слова: юридическое лицо, добросовестность, недобросовестное поведение, действовать добросовестно, злоупотребление правом, запрет злоупотребления правом, правовые последствия, субъективное право.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ / CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS / УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА



ՀԱՐՈՅԱՆ ՀԱՅԿՈՒՇ
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ, ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորի օգնական

HAROYAN HAYKUSH
PhD Student at the Chair of Criminal Procedure and Criminalistics of the Yerevan State University, Judicial Assistant at the Anti-Corruption Court of the Republic of Armenia

АРОЯН АЙКУШ
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики юридического факультета Ереванского государственного университета, помощник судьи Антикоррупционного суда РА

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ*

LEGALITY OF APPLYING PLEA BARGAINING PROCEDURE IN CASES OF CORRUPTION-RELATED CRIMES*

ПРАВОМЕРНОСТЬ ПРИМЕНЕНИЯ ПРОЦЕДУРЫ СОГЛАСИТЕЛЬНОГО ПРОИЗВОДСТВА В СЛУЧАЯХ КОРРУПЦИОННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածի նպատակն է վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված համաձայնեցման վարույթի՝ որպես դատաքննության հատուկ կարգի կիրառման առանձնահատկությունները կարգավորող՝ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքները նախատեսող իրավական նորմերի հետ կապված որոշ արդի հիմնահարցեր: Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ նկատի ունենալով օրենսդրի տրամաբանությունը և հակակոռուպցիոն քաղաքականության հետ կապված՝ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ դրանում առաջարկվել են օրենսդրական փոփոխություններ՝ կապված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքում համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքի ավելացման հետ:

Այս առումով հոդվածն արդիական է, քանի որ հոդվածում քննարկված հիմնախնդիրները, դրանց արդյունքում տրված եզրակացությունները և առաջարկությունները կարող են տեսական աղբյուր հանդիսանալ «Համաձայնեցման վարույթ» ինստիտուտի վերաբերյալ, ինչպես նաև գործնական նշանակություն ունենալ նշված ինստիտուտի կատարելագործման համար՝ օրենսդրական նախաձեռնության տեսանկյունից:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ համաձայնեցման վարույթի կիրառումը բացառող հանգամանքի նախատեսումը կարող է զսպող մեխանիզմ հանդիսանալ պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կատարումը բացառելու առումով, քանի որ, եթե այլ դեպքերում պատժողական քաղաքականություն իրականացնելու պարտականությունը դրված է պաշտոնատար անձանց վրա, ապա կոռուպցիոն հանցագործությունների դեպքում՝ հանցանք կատարողները հենց իրավակարգի ամրապնդման, հանցանքների և այլ իրավախախտումների նախականխման, կանխման, կատարված լինելու դեպքում՝ համապատասխան պատժողական գործունեության իրականացման համար պատասխանատու անձինք են:

